

2739

2740

2741

2742

2743

2744

26

100-30

2881

2010

63 2001


5013

my 58

2012

75

Printed in Turkey



347.6 *uf*

**ՍԱՄՈՒԵԼ
ՄՈՒՐԱՏԵԱՆԻ
ԿՏԱԿԻ ԽՆԴԻՐԸ**

Դասախօսութիւն

Ս. ԱՄՈՒՆԻԱՆ

ԱՐԾՐՈՒԳԻ

1879

Թ Բ Յ Լ Ի Զ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀՐԵՏԻԱԶԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

23028

Дозволено цензурою Тифлисъ
30-го Мая 1879 г.

2185

40

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԻ ԿՏԱԿԻ ԽՆԴԻՐԸ.



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

I

Քանի տարիներ է, քանի օրեր է գու-
ցէ, որ դուք, մեծապատիւ հանդիսական-
ներ, չատ անգամ կարգացել էք, լսել
էք, դրել էք, մտածել էք և գալծել էք
Հայերի օգուանների վերաբերութեամբ
Քաղաքական աշխարհի վերջին դպրոցը,
որի նպատակն էր քրիստոնէութեան
ազատութիւնը և որոյ իսկական հետեան
քըն հղաւ Հայի անմեղ արիւն թափելը,
դեռ պահած ողորկի ծանրութեամբ խոր-
հըրդակցութիւնները, Հայ ազգի կրած
տանջանքը և նորա զէպի քրիստոնէայ

*

տէրութեանց արդարասիրութիւնը դարձ-
րած բողոքը, լրագիրների և ատենաբան-
ութեանց զրդումները և համոզմունքները,
Հայ ազգի ընտանեկան ճանապարհով
ցոյց տուած եղբայրսիրութիւնը ղէպի
տառապեալները — Սոքա էին, պնդոն-
ներ, ձեր մտածողութեան նիւթերը, ձեր
սրտացաւը, ձեր մասնաւոր հոգսերը: Եւ
սոքա իսկ ստիպեցին ձեր երեակայու-
թեանը պատկերացնել ձեր առաջն, ինչ-
պէս մի բնագէտի առաջը, մի թոյլ
կազմակերպութիւն, մի կիսամեռ, կիսա-
կենդան մարմին: Դուք, ինչպէս բնագէտ,
անդամաղննեցիք, քննեցիք այդ կենդա-
նութիւն խնդրող մարմինը, որ իմանաք
թէ նա կենդանութեան ընդունակութիւն
ունի իւր մէջ. տեսաք և ասացիք, ահա
շրթունք, որ ամենից առաջ երկրիս երե-
սին արտասանեցին քրիստոնէութիւն
բառը և սորա ճշմարտութիւններն, ահա հի-
ւանդութեան ճգնաժամի բոլորէումը պիտի

խփած բերանը, որ ահով և դողով մի բառ
կարտասանէ, մինչդեռ իւր ժամանակն
ամենից առաջ ընդունեց սուրբ հաղոր-
դութիւնը: Դուք բաց արիք մեռնողի
կուրծքը, տեսաք նորա ճմլված սիրտը,
որ երբեմն ուժգին հարուածով կար-
տայայտէր այն բարի և վեհանձն զգաց-
մունքներն, որք մարդուս կեանքը տա-
նում են դէպի յառաջադիմութիւն և ա-
ռաքինութիւն: Այդ մարմնի ուղեղը, որ
մի ժամոնակ մտածող էր և ըմբռնող
բնութեան խորհուրդներն և գիտութիւն-
ների իմաստը — այսօր կորցրել է կար-
ծես այդ ընդունակութիւնը: Նորա զօ-
րեղ բազուկները, որոնցից Հռովմայեց-
ւոց լեգէօնները սարսափ կը զգային,
այժմս փշրած կմախք են ձևացնում,
կարծես անդամալուծի են նորա ոտքերը-
որք առաջ արագ քայլերով ընթանում
էին արդարութեան ճանապարհը: Այդ
կիսակենդան, կիսամեռ մարմինն է ձեր,

իմ, մեր ամենքիս տիրելի, կաթողին հայ-
րենիքը — Հայաստանն է նա: Նկարագրած
կաղմուածքը շատ դարեր կրում է այս-
պիսի տկարութիւն, բայց և այնպէս նա
այսօր էլի կենդանի է, ունի կենդանու-
թեան, լիովին առողջութեան ընդունա-
կութիւն, ունի viabilité. Ինչ կտաին
թող մտածեն Հայոց համար օտարները,
բայց ամենքն էլ, թէ Հայ ազգի թշնա-
մին և թէ նորա բարեկամը, խոստովա-
նում են, որ նա ընդունակ է և կարող
իւր տկար դրութիւնից դուրս գալ, ոտ-
քի կանգնել, մտածել և գործել իւր ողջ
զգայարանքներով: Ուրքան թշնամին լի-
նի անզգամ, դիտելով Հայոց սրտումս
թիւնը, նա չէ կարող չ'ընդունել այս
ճշմարտութիւնը. սրբան բարեկամը լինի
կեղծաւոր, նորա այդպիսի համոզմունքը
միայն կը համարուի անկեղծ. ժամանա-
կի հոգին և ազգիս վերոյիշեալ բողոքը
պահանջեցին առաջ ստանալ իրաւունք

և միջոց: Կարծում ենք թէ այդ բողոքը
մասամբ յարգվեցաւ: Վերոյիշեալից հե-
տեում է ձեր ուշադրութեան արժանի
մի խնդիր: Ի՞նչէ պատճառը, որ մինչև
այսօր Հայոց ազգը պահպանում է իւր
անհատականութիւնը, իւր իրաւունքնե-
րը պահանջ անելու մարդկութիւնից. նա
թէպէտ տկար, բայց էլի կարողացել է
մնալ առաջին ազգութիւն Ասիայի ազ-
գութիւնների մէջ, ինչպէս որ ընդու-
նում է լուսաւորեալ աշխարհը: Իմ հա-
մեստ կարծիքով, պարսններ, գորա պատ-
ճառն այն է, որ Հայոց ազգն ունեցել
է և ունի գովելի յատկութիւններ, այն
է կրօնասիրութիւն և ուսումնասիրու-
թիւն, նա կը սիրէ և կը պաշտպանէ
իւր եկեղեցին և կրթողական միջոցնե-
րը, որք նոյապատում են նորան հիմնել
իւր ազգային գոյութիւնը և հաստատու-
թիւնը բարոյական սկզբունքների վերայ և
հասնել կատարեալ ինքնաճանաչութեան:

Հայի հանճարը, խելքը ղիտողական է, նա սիրում է և սովորել է համեմատութիւն անել, ինչպէս կառնն դասաւորել երեսօթները միմեանց հետ և այնտեղից դուրս բերել կանոն իւրեան համար: Հայը տեսաւ, որ այն ազգութիւններն, որոնք անտարբեր են դէպի կրօնասիրութիւն, որոնք այսօր մէկ դաւանութեան կը դիմեն, վաղը միւս եկեղեցւոյ ծոցը կընկնեն և այսպիսի տատանումն և դեգերումն պայմանաւորվում է արտաքին պատճառներից, այդպիսի ազգեր չեն ունեցել երկարատևութիւն, նոքա ընկել են մեռել և անհետացել: Չը կան այսօր Ասիայումը այն ազգութիւնները, որոնք Հայ ազգի ժամանակակիցներն էին, որովհետև նոքա չեն ունեցել հաստատուն բարոյական հիմունք իւրեանց կեանքի համար, չեն ունեցել հաստատուն կրօն, այս բառի բարոյական նշանակութիւնով, թէպէտ

մեռեալ ազգերի քաջածը ոչինչ է եղել Հայերի տարածին հետ համեմատելով: Հայը դիտացել է, որ քրիստոնէական կրօնն է կատարեա ճշմարտութիւն և մաքուր խղճմտանաց զգացմունք և որ մի անհատական և ազգային կեանք, որ զուրկ է կամ չէ հասկանում, չէ պահպանում այդ կատարեալ ճշմարտութեան և մաքուր խճմտանաց զգացմունքի հիմունքը — է անուղիղ, անխիղճ կեանք, անհատատ և ուրեմն բարոյապէս տկար:

Եւ իսկ այդ քրիստոնէական ուսման ճշմարտութիւնը պահանջում է, համարեա թելադրում է, որ մարդուս սիրտը և խելքը հաւասարապէս զուգընթաց պիտի զարգանան փոխադարձաբար միմեանց նպաստելով և պաշտպանելով: Այստեղից բնականօրէն Հայը հասել է այն եզրակացութեան, թէ եկեղեցին և ուսումնարանը հարազատ եղբայրներ են և վերջինը պիտի սննդուի, զարգանայ

առաջինի հովանաւորութեան ներքոյ,
գոնեաւ Հայոց վերաբերութեամբ: Այդ
պատճառաւ ի բնէ Հայոց վարժարան-
ներն և ուսումն եղել են մեր պատմու-
թեան մէջ և այժմ անգամ Հայոց եկե-
ղեցւոյ արտօնութիւններից մէկը, Հայոց
եկեղեցին իւր գաւթում ուսումնարան-
ներ հիմնելը համարել է իւր պատմական
իրաւունքներից մէկը: Այդպիսի իրա-
ւունքներ ճանաչուած են ամեն ուրեք,
որտեղ Հայ մարդը բնակութիւն է գցել:
Մեր ազգի յիշեալ երկու պատմական
յատկութիւններն այնքան յարգանքի և
զարմանաց տեղիք են տուել ողջ աշ-
խարհին, որ նա բռնել է մի ինքնուրոյն
գիրք: Նորա մէկ կողմից կանգնած է ե-
ղել նորա բարեկամը, որ կամեցել է պը-
սակել նորա ճակատը թագով և պսա-
կով և միւս կողմից նորա թշնամին, որ
պատրաստուել է նիզակով վիրաւորել
նորան, և երկուսն էլ մինչև այսօր ապ-

չած կանգնած են անվտանգութիւնից և սպառում են: Այս անվտանգ սպառելուն որոշումն կը տայ ապագան՝ պատմութիւնը և պէտք է կարծել, որ վճիռը դարձեալ մեզանից է կախուած: Ազգային հաստատութիւններ հիմնադրելն և պաշտպանելը պահանջում է զօրութիւն, ոյժ, զօրութեան և ոյժի միութիւն. ուրեմն վերոյիշեալ խնդրի վճիռը Հայոց կողմանէ պահանջում է նոցա զօրութիւնների ամբողջութիւն, միութիւն կամքի, յուսոյ և հաւատի: Այստեղից հասկանալի է, թէ որքան վնասակար է մեզ համար, երբ մեր բարոյական ոյժերը սփռուած են լինում աշխարհիս երեսին, որքան վնասներ մեր ազգը կրել է բազմադարեայ գաղթականութիւններից: Մեր կարծիքով Հայոց գաղթականութիւնը միանգամայն խախտում է մեր ազգային շինութիւնը, մեր ազգութեան սկզբունքները: Դա մի այնպիսի պատ-

մական իրողութիւն է, որ ոչինչ ասացուցի չէ կարօտ: Բաւական է յիշել գաղթող ժողովրդի սերունդի կորուստը, նոցա կրօնափոխութիւնն և մայրենի լեզուն բոլորովին մոռանալը: Բայց և այնպէս մենք նկատում ենք, որ Հայ մարդը գաղթելով պահպանում է իւր սրտի և ուղեղի մէջ այն սրբազան պաշտելի նշխարները, որոնք նա ծծել է իւր մօր կաթի հետ, սոքա են կրօնասիրութիւնն և ազգային ինքնաճանաչութիւնը, որ նպատում են հեռու աշխարհներումն էլ նորա պայծառութեան և պաշտպանութեան:

Իբրև հաստատութիւն այս առածիս, ես կամենում եմ, պանդոններ, սլամմել ձեզ մի պատմութիւն, որ մեր այս երեկոյի զրոյցի նիւթն է: Նա ունի ընդհանուր ազգային նշանակութիւն, նորա մէջ բովանդակվում են ազգիս յատկութիւններն և այն կանոնը, թէ Հայ

մարդը միշտ և անփոփոխ Հայ կը մնայ
որքան և նա հեռու լինի իւր հայրենի-
քից, եթէ զօրեզ տարրը չէ գործում մահ-
կանացու մեղք, այսինքն չէ սպանում
Հայի մէջ նորա ազգութեան անհատա-
կանութիւնը:

Եւ կը պատմեմ ձեզ Մուրատեան
վարժարանի պատմութիւնը և նորա ներ-
կայ դրութիւնն և նշանակութիւնը Հա-
յերի համար:

Ս. Մուրատեանի կտակը մի քանիսը
ընդունում են իբրև Ռափայէլեանի կը-
տակի հետևանք և նոցա մէջ տեսնում
են ընդհանուր կապ: Այդ պատճառաւ
մի քանի խօսքերով ես ձեզ կը ծանօ-
թացնեմ Ռափայէլեանի կտակի հետ, ո-
րի վերայ մենք գուցէ կորցրել ենք մեր
իրաւունքը և յետոյ կը խօսեմ Ս. Մու-
րատի կտակի մասին:

III

ՀԵՒՈՒԱՐԴ՝ ՌԱՓԱՅԷԼ ՂԱՐԱՄԵԱՆ.

Մխիթարեան միաբանութեան բաժանուելուց յետոյ, Արքա Ստէփաննոս Մելքոնեանի ժամանակին, մի մասն անցաւ Տրիէստ, որտեղից երկու վարդապետներ Նիկողայոս Բուզանեան և Պօղոս Մեհերեան ուղարկուեցան Հնդկաստան նրպանս ժողովելու, որտեղ նոքա հրաւէր ստացան Եղուարդ Ռափայել Ղարամեանից ընդունել պայման, որ Հ. Նիկողայոս տանէ նորա երկու որդւոց Աղեքսանդրին և Յովհաննէսին Լօնդօն ուսում տալու և Հայոց լեզու ուսուցանելու և միւսը մնայ Մատրաս, միւս որդւոց և աղջկանց հայերէն սովորեցնելու և դորանից յետոյ Հեղուարդ Ռափայելը կը կատարի վարդապետների դիտաւորութիւնը՝ հիմնելու Հայոց աղ-

դիւ աղքատ մանկանց համար դպրատուն:
Ո՞վ է Հեղուարդ Ռափայէլեան Ղա-
րամեանը.

— Հայ-կաթուրիկ խաչիկ Ղարամեան
Ջուղայեցի, 1650 թուականին ծա-
խում է իւր ստացուածքն և դնում է
Հնդկաստան առուտուրի համար: 40
տարուց յետոյ նա վերադառնում է Ջու-
ղայ 1,000 թումանով և այստեղ ամուս-
նանում է և այդ ամուսնութիւնից ծըն-
վում են երեք որդիք և երկու դուստր,
անդրանիկ որդւոյ անունն է Ռափայ-
էլ, որ է վերոյիշեալ Հեղուարդի
հայրը: Ռափայէլը ամուսնանում է
Հնդկաստանում Յովհաննէս Խօջամալի
դստեր Նանաջանի հետ և Հնդկաստա-
նից վերադառնում է Ջուղայ, որտեղ ծը-
նում է երկու որդի և մի դուստր, որոն-
ցից է ինքն էղուարդը (1730 — 33
թուականին), իւր հօր մահից յետ է-
ղուարդը դնում է Հնդկաստան Խօջա-

մալի մօտ, Փոքր միջոցից յետոյ Հընդ-
կաստան գնում է և նորա մայրը, որտեղ
Փոնդիշերում նա՝ Հեղուարդը մտնում
է անգղիացւոց ուսումնարան: Ուսում-
նարանը նա թողնում է Անգղիացւոց և
Ֆրանսիացւոց պատերազմի ժամանակը,
1761 թ. ճանապարհին նորան աւազակ-
ները կողոպտում են և Էդուարդի ձախ
ձեռքը վիրաւորում են: Միւս օրը ձրկ-
նորսները գտնում են նորան և տանում
են Պօնդիշերի: Այստեղից, աղքատանա-
լով բոլորովին, Էդուարդը 16 տարեկան
կրկին վերադառնում է Մադրաս: Այս-
տեղ նա սկսում է վաճառականութիւն,
գնում է ջին, Մանիլայ, Բանկալայ, ա-
մուսնանում է 1772-ին և ծնում է ե-
րեք որդի և երկու դուստր՝ Աղեքսան-
դրը, Յովհաննէս և Լուի, Աննա և Ան-
նա—Մարիամ:

Էդուարդը իւր երկու որդւոց պ. Բու-
զանեանցի հետ ուսման համար Լօդօն

ուղարկեց 1785 թուականին, նա պատ-
ուիրում է նոցա լինել հարազատ որդիք
ծնողաց, ազգին և կրօնին:

Եւ մի և նոյն ժամանակը գրում է
նամակ Մխիթարեան միաբանութեան, ո-
րով առաջարկում է թարգմանել Ռօլ-
լէնի Հռովմայեցւոց պատմութիւնը 16
հատոր հայերէն լեզուով և դորա համար
ապլիս է 8,000 ռոփի, որ իւր սո-
կոսիքով հատնում է 10,000 ռոփիի և
գրեանց վաստակը և այլ ևս 5,000 ռ.
խոստանում է տալ վանքին, երբ տեսնէ
տպած առաջին հատորը: Յետոյ ի 1-ն
փետրվարի 1788 ամի Էդուարդը գրում
է մի այլ նամակ Բուզանեանցին Լօնդ-
րայ, թէ միաբանութիւնը ստացաւ 8,000
ռուփին թարգմանութեան համար և ո-
չինչ չարեց չորս տարուայ մէջ և թէ ինքը
այլ ևս ուրիշ նպաստ չէ կամենում ա-
նել: Յետոյ աւելացնում է. «Չը գիտեմ
թրեատեանք ճանաչեն զիս իբրև զմի ի

յաղգէ Հայոց, որք տան բաղում ինչս
Էջմիածնայ և Երուսաղէմայ և ոչ զայլ
ինչ գտանեն, բայց Աստուած գրեզ օրհ-
նէ, որք սխալին զի չեմ իբրե զնոսա,
վասն զի եթէ դոքա ի փոքուն չեն հա-
ւատարիմ, զիարդ հրաւիրես զիս տալ
դոցա քչլ եւ փող դպրատուն շինելու:

Մի և նոյն նամակի մէջ նա գրում
է թէ 50,000 ռուբլի կը դնէ Անգղիաց-
ւոց բանկը դպրատուն շինելու Հայոց
աղքատ Երեխանց համար, որ խոստումն
կը կատարէ իւր կտակաւ: Հետեւեալ նա-
մակից, որ գրուած էր 29-ի յունվարի
1791 թմի, երևում է, թէ նորա աղջիկ
Աննան պսակվում է Սամուէլ Մուրատի
հետ: 1789 թմի դեկ. 31-ի Հրիտակի
պատճէնից (Երես. 41 Հատ. Ա.) երևում
է, որ Էդուարդը թողնում է 7310 հուն,
կամ 65,000 Փ. . որ միացնելով առաջ
միաբանութեան տուած 8,000 ռուբլիի
հետ դնուի կտակակատարների միջնոր:

դութեամբ Անգղիացւոց բանկը և առնուի մուրհակ պարտաւորութեան չափ հատուցման, որ 1). Նորա տոկոսով տըպագրուին Ռօլլենի պատմութեան և հրնախօսութեան թարգմանութիւնները և 2) զկնի նորա պահպանուի դպրատուն մի վասն աղքատ մանկանց Հայոց: Կտակակատարներն են երկու Անգղիացի և երկու Հայ, Միքայէլ Տէր Յովհաննիսեան և Սամուէլ Մուրատ, Էդուարդի փեսան:

Էդուարդն իմանում է, թէ նորա որդիքը կամենում են Անգղիացւոց եկեղեցւոյ դաւանութիւն ընդունել, այդ պատճառաւ նա թողնում է իւր գործերը Մուրատի կառավարութեան և իւր կնոջ մահից յետ գնում է Լոնդօն: Հիւանդանում է նաւի վերայ և մի օր առաջ քան Լոնդօն հասնելը մեռնում է և նորա դիակը ձգում են ծովը: Սամուէլ Մուրատը գրում է նամակներ Մըլիթարեան միաբանութեան հրիտակի

5851
40

մասին, հրաւիրելով Բուզանեանցին գալ
Մատրաս խորհելու, թէ ինչ կերպ
կատարեն կտակի միտքը:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱԴ.

Նախահարք ազգատոհմին Մուրատեանց
են սորա: Մուրատ Աղամալեանը, որ
կարգուած էր Պարսից Շահաբաս թագա-
ւորից վերակացու Հին Զուղայի 1606
ամի գողթականների վերայ, ստանալով
Մեւլիք անուն: Մուրատի որդին էր Ա-
ղաջան, սորան -- Աղամալ, սորան խա-
րիսիմոս (Սարամ) և սորան Մկրտիչ
Սարամ, հայրը կտակող Սամուէլ Մու-
րատի: Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրա-
տեանը ծնաւ ի 1760 ամի Եւզոկիա-
յումը, հայրն էր, ինչպէս աւագինք, Մը-
կըրտիչ Սարամ Մուրատեան և մայ-
րը -- Բէկզադէ տիկին, Եւզոկացի Մի-
քայէլ Լաղեանցի աղջիկը:

Մկրտիչ Սարամը գաղթում է իւր
գերդաստանով իւր հայրենիքից դէպի

Կ. Պօլիս վաճառաշահութեան և գործերի
համար: Այստեղից նա անցնում է Մա-
ճառաց երկիր փետրավարատ քաղաքը,
որտեղ այն ժամանակ կային քանի մի
հայ գերդաստանք: Փետրավարատում
ծանօթանում է Մխիթարեան միաբանու-
թեան անդամ վարդապետ Մարտիրո-
սեանի հետ, որ յանձնառու է լինում
կրթել նորա որդւոց կարապետին և Սա-
մուէլին: Այստեղ նմանապէս անյաջո-
ղութիւն գտնելով իւր գործերի մէջ Մը-
կըրտիչ Սարամը մտադրում է գնալ
Հնդկաստան իւր երկու որդիերանց հետ,
որ և կատարում է բայց չը հասնելով
մինչև ի Մատրաս, Ս ու Ր ա տ քաղա-
քումը հիւանդանում է և մեռնում, իսկ
որդիքը գնում են Մատրաս և այնտեղից
կարապետը անցնում է կալկաթայ, իսկ
Սամուէլը մնում է Մատրաս վաճառա-
կանութեան համար, և գտնում է իւր
վարքով և խելքով մեծ համակրութիւն

տեղական հայերի կողմից: Վաստակելով
25 հազար ռուբլի մարգարիտ ծախելով,
նա պսակվում է Ռափայելեանի աղջկայ
վերայ (Աննայի) և դառնում է իւր ա
ներսէ կտակակատարը: Ինչպէս վերը յի
շեցինք, Սամուէլ Մուրատը գրում է նա
մակ Բուզանեանցին, և հրաւիրում է
բերել իւր հետ Աղեքսանդր և Յովհան
նէս Ռափայելեաններին Մատրաս «վա
սըն բարութեան հասարակ ազգիս Հայոց»
մտածելու Ռափայելեանի կտակը կա
տարելու միջոցով: Այդտեղ Սամուէլը
յիշում է թէ հրիտակի գումարի վերայ նա
իւր ստացած Էդուարդ Ռափայելեանից
ժառանգութիւնից և իւր կնոջ ժառան
գութիւնից տեւադնելու է տասանորդ, որ
կազմում է մի գումար 3,200 հուն. բայց
նկատելով որ Նիկողայոս Բուզանեանը
հրիտակի մեծ մասը կամենում է իրան
սեփականել, Սամուէլ Մուրատը նախա
տում է նրան ասելով, Գիտե՞ս վերապատ

ուելի մեր ազգս Հայոց, գուրկ իյուսմանց
և գիտութեանց թէն ի պանդխտութեան
շրջելով և տարաշխարհիկ լինելով աստ
և անդ ինչս շահիմք և փոքր մի տաշե-
ցեալ ի մէջ այլ ազգաց ուժով շահե-
ցեալ ընչից և հարստութեան մերոյ ի
մէջ գիտնոց գտանիմք, սակայն տաշումն
այն ոչ գուրկ դեռաբողբոջ, ոչ լինիմք
ըստ բաւականին կատարեալ: Միևնոյն
ժամանակը Սամուէլ գրում է միաբա-
նութեանը ձեռք առնել զանազան հե-
ղինակութիւններ և թարգմանութիւններ
բառարանների և պատմութիւնների
Հայոց լեզուով, որոց ծախքը նա խոս-
տանում է վճարել: Խնդրում է միաբա-
նութիւնից ուղարկել ուսուցիչներ Հնդ-
կաստան, ազգային լեզուն ուսուցանելու
Հնդկաստանի հայ մանուկներին: Մեր-
ձաւորապէս 1808 թ. նա, իւր բաղ-
ձանքին համաձայն լինել օգտաւէտ և
շահաբեր իւր ազգին, գրում է մի կտակ,

որոյ վեցերորդ յօդուածը հետեւեալն է.

«Վեցերորդ, ես իմ հաշուագրքումն մին որբոց աղքատաց և տնանկաց հաշիւ ունեմ. իմ ստացուածքիցն մին հարիւր և յիսուն հազար հուն հանեն և տանեն նոյն հաշիւն. և յետ ասացեալ հարիւր յիսուն հազար հունն ասացեալ հաշիւն տանելէն, զոր ինչ որ ասացեալ հաշուումն տալիքս գումարի, ասացեալ գումարն բոլորն թողման ամ Հայոց ազգի որբ և աղքատ մանկանց դպրատան շինութեան համար, որ ըստ խորհրդոյ և միջնորդութեան Վենետիկ Հայոց միանձանց որ մի կողմն Ներսիսի որ աջողակ համարեն գետին գնեն, և ասացեալ գետնի եկամուտն քանի մանկանց տարեկան ծախուցն որ բաւական առի, այնքան Հայոց ազգէն որբ և աղքատ մանկունք ասացեալ դպրատանն ճրիպէս ուսումն և լեզուք ուսանեն և դառնան իւրեանց հայրենիքն:

«Եւ պարտականութիւն չլինի ասացեալ
դպրատան ուսանողաց վերայ քահանայ
լինելոյ. բայց եթէ ոմանք իւրեանց ա-
զատ կամաւն յօժարեսցին քահանայու-
թեան՝ լինիցին»:

«Եւ եթէ ոմանք հարուստ անձինք ևս
ազգէս Հայոց կամեսցին զմանկունս իւ-
րեանց վերոյասացեալ դպրատանն ու-
սուցանել, կարող ան, զծախսն հատու-
ցանելով. քանզի դիտաւորութիւնն իմ
վասն այս դպրատան չլինութեան՝ է վա-
սըն աղքատ մանկանց ուսուցանելոյ,
այսինքն վասն նոցա զի որոց հարքն
չքաւորք են, և վասն չկարելոյ նոցա
զծախսն դպրատան հատուցանել՝ զանց
առնեն ուսմամբ մանկանց իւրեանց, և
անմեղ մանկունքն այնոքիկ մնան զուրկ
ի յամենայն ուսմանց և դիտութեանց, և
որոյ վասն գրեթէ ըստ մեծի մասին ան-
տերունչ ազգս Հայոց տգէտք են»:

«Ես յուսամ Սատուած, զի և այլք

հարուստ անձինք ազդէս Հայոց, յետ ճաշակելոյ զքաղցրութիւն ուսման դպրատանն, զորս իմով միջնորդութեամբ սկըսանի, և նոքա իմոց շաւղացն հետեւեցեն, և այնու կարելի լինիցի սփռիլ ի մէջ ազգիս, և թէ ոչ բոլորովին՝ գոնէ ըստ մասին, զոյս գիտութեան և իմաստութեան. և անտերունջ ազգս զարթնուցու ի քնոյ թմբութեան և անհողութեան:

«Եւ վասն կառուցանելոյ զդպրատունն և ի գործ դնելոյ զտարեկան եկամուտ գնեցեալ գետնոցն, և աղաքս տեսակաց ուսման և լեզուաց զորս կամիմ դի ստանիցին մանկունքն ի յիշեալ դպրատան և վասն որպիսի կարգաւ և կանոնիւ առաջացուցանելոյ զդպրատունն և որպիսի վարելոյ ընդ նա, զկարծիս իմ յատուկ գրեցեալ ներփակեցի ի յայսմ ¹⁾ թողեալ

1) Այս յաւելուածը ոչ կտակին հետ գտնուած է և ոչ առանձին:

հայատակ ուղղութեան՝ եթէ սխալացեալ լինիցիմ՝ կտակակատարացն իմոց և հարց Մխիթարեանց, որոց միջնորդութեամբն կամիմ զի կառուցցի զպրատունն, զսխալանս կարծեաց և կարգադրութեան իմոյ ուղղել. իսկ եթէ կարծիս և կարգադրութիւնս իմ ուղիղ դատեսցեն, այնու ձևով առաջացեն: Եւ այսքան առ այս:

Քանի մի տարուց, այն է 20-ին ապրիլի 1816 թ. մեռնում է Սամուէլ Մկրտիչ Մուրատը, թողնելով ազգին վերոյիշեալ հրիտակը:

Ժառանգներ և կտակակատարներ նըշանակված էին Սամուէլի երկու որդիք՝ Էդուարդ և Յովհաննէս Մուրատեանները, և կինն Աննան: Էդուարդ և Յովհաննէս Մուրատեանները զրում են նամակ 25 սեպտ. 1816 թ. Մխիթ. միաբանութեան հրաւիրելով ուղարկել Մատրաս պատգամաւորներ խորհելու հայ զպրատան

համար, ուղարկելով նոցա և վեցերորդ
յօղուածն կտակի: Այդ առթիւ Մխի-
թարեան միաբանութիւնը ժողով կազ-
մեց և ընտրեց պատգամաւոր իւր կող-
մից երկու վարդապետներ, Սարգիս
Թէոդորեանին և Սիւգիաս Սոմալեանին
տալով նոցա հաւատարմագիր: Հաւա-
տարմագրի մէջ յիշած է, թէ արվում է
նոցա իրաւունք ստանալ դրամ, որ կտա-
կել է Ս. Մուրատը «վասն հաստատելոյ
դպրատուն յուսումն որք եւ աղքատ մանկանց
Հայոց»: Միեւնոյն պատգամաւորք ստա-
նում են և յայտարարութիւն միաբանու-
թիւնից, որից պարզ երևում է, որ ինքն
միաբանութիւնն առանց խտրութեան
կտակեալ բարեբարութիւնը վերաբերում
է ամբողջ ազգին: Հասնելով Մատրաս
նոքա չկարողացան հեշտիւ առնել ժա-
ռանգներից կտակի գումարն: Եղուարդը
ասում էր թէ՛ նորա եղբայր Յովհաննէսը
Եւրոպայ է, և առանց նորա ինքը ոչինչ

չէ կամենում անել, և երկրորդն այն պատճառաւ, որ միաբանութիւնը չի տալ կտակաւորութեան հաշիւ հրիտակի մատակարարութեան մասին: Այդ էր զխաւոր պատճառը, որ ժառանգները չէին հաւատ ընծայում միաբանութեան զրամական գործերի մէջ: Գորա առաջն առնելու համար Թէոփորեանը միաբանութեան կողմից վկայեց և պարտաւորվեցաւ օրանիւ և գրով... զի միաբանութիւն տացէ ձեզ զհաշիւ ծախուց դպրոցին ոչ միանգամ ի տարւոյ այլ և երկիցս հաճել զկամս ձեր լիովին: Գորանից յետ Եզուարդ Մուրատեանը 15-ին յունվարի 1820 թ. գրում է նամակ միաբանութեանը ուղղակի վերջացնելու հրիտակի գործը նորա ևղբայր Յովհաննէսի հետ և այդ պատճառաւ գործակալները Մատրասից վերադառնում են Վենետիկ առանց փող ստանալու և տանելով իրենց հետ մի նամակ

այրի Մուրատեանից նորա որդի Յովհաննէսի անունով, որով մայրը յորդորում է որդուն վճարել կտակի գումարը: Այդ նամակի պատասխանն ունի նշանաւոր տեղեր, որտեղից երևում է ժառանգների անհաւատարմութիւնը դէպի միաբանութիւնը:

«Աղաչեմ», գրում է Յովհաննէսը իւր մօրը, «ընթերցիր և վերստին ընթերցիր և հաղարիցս կրկնեա՛ ընթեռնուլ զայն կտակ զոր դու մեզ յանդիման արկանես: Եթէ միտք և խորհուրդ հօր իմոյ էր երկու հարիւր հաղար հուն յաւելուլ ի զանձըս վանաց վեներակոյ, որպէս դու համարիս, զիմրդ ինքն անձամբ ոչ վճարեաց, զի՞նչ պէտք էին քսան ամաց ժամանակի զայդ խորհելոյ, ուր ի սօղ ժամանակի կարէր ի գործ դնել այսինքն և ես հարստացնել զմիաբանութիւն մի այնչափ հարուստ արդէն՝ որչափ խորամանկ և բանասարկու... »

...«Նախ ասեմ զայս, թէ ես զայս տուրս (կտակի գումարը) համարեմ արարեալ վասն չքաւոր և որք մանկանց ազգիս, որ ոչինչ կապակցութիւն ունեն ընդ վանաց և յայսմ գործառնութեան համարիմ, որպէս պարտս է, զվասն իբրև մասն երկրորդական գործակից ընդ մեզ»։ «Ահա այս է զոր հայր իմ իմանար յառնելն և զայս յայտ տունէ իւր թողեալ կտակ, և այս է որ խիղճ մտաց իմոց և դատողութիւն իմ առաջնորդէ ինձ սրտի մտօք ի գործ դնել, ուր ոչինչ այլ մտածողութիւնք թելադրեսցեն ի փոխել զխորհուրդս իմ։»

...«Արդ ապաքէն ենթադրեալ ես և հայր մեր յատկապէս եղեալ իցէ ի կտակի իւրում զի տացուք մեք ի ձեռս վանաց զտուրս զայն, զոր նա որոշեաց յիշատակ անուան իւրոյ հանդերձ պայծառութեամբ ազգիս, և այսպէս իսկ ճանաչելով ըզ զիտաւորութիւն հօր մերոյ, հարցանեմ

ցբեղ, կարիցեմք արդեօք զնել ի ձեռս
վանացն զղրամս, թեոանելով զնա յայս-
պիսի թշվառ և անկարգ վիճակ»:

Միևնոյն միտքը յայտնում է Յովհան-
նէսն իւր նամակում փարիզից գրված
20-ին փետր. 1820 թ. առ Աբրահմ, ո-
րով պարզօրէն ցոյց է տալի, թէ նա
այլապէս է հասկանում իւր հօր կտակի
նպատակն և յայտնում է թէ նա կվար-
վի զգուշութիւնով յանուն բովանդակ աղ-
ղին: Այսպէս պատասխանում է Յով-
հաննէսը Աբրայի նամակին, որով պա-
հանջում էին նրանից գալ Վենետիկ և
վճարել փողերը: Վերջապէս գալով Վե-
նետիկ Յովհաննէս Մուրատեանը գրում
է նամակ Աբրայ Ստեփաննոս Ազոնցին,
որով քննադատում է կտակը մանրա-
մասնօրէն և ցոյց է տալիս միաբանու-
թեան դերն այդ կտակի մէջ, անուանե-
լով այդ դերը կրաւորական, և պատմում
է թէ ինչ էր պատճառն, որ միաբանու-

Թեան գործակալներն անյաջող ճանա-
պարհորդութիւն արին Հնդկաստան, ըս-
տանալով Մուրատեաններից 100,000
Փր: Այդ պատճառը մեկնում է նա
այնպէս, որ միաբանութիւնը տուեց
գործակալներին իշխանութիւն ամբող-
ջապէս ստանալու հրիտակի գումարն
իբրև իւր սեփականութիւն համարելով,
կամենալով զրկել ժառանգներին և կտա-
կալատարներին ամենայն իրաւունքներից
խառնվելու դպրատան մատակարարու-
թեան մէջ և դրամի ծախսելումը: Յով
հաննէս Մուրատեանը կարծում է, որ-
Սամուէլ երբէք այսպիսի դիտաւորու-
թիւն չէ ունեցել, և այդ մտօք առա-
ջարկում է Աբբային հսկել ուսումնարա-
նին, Քբայց Մուրատեան տունն ինքեան
պահէ միշտ զծայրագոյն իրաւունս յայն
ամենայն, որ հայի ի դպրատունն և ըստ
ամենայն բանի: Դորանից յետ Յով-
հաննէսը պարտաւորացնում է միաբա-

նութեան տալ հաշիւ դրամի մատակարարելու համար:

Սարգիս Թէոդորեանը արդարացնելով Յովհաննէսի մեղադրութիւնը, որ սա դնում էր միաբանութեան վերայ, իւր կողմից աւելացնում է, թէ միաբանութիւնը այդ գործում չատ սխալվեցաւ և կատարեալ իրաւունք տվեց ամենքին կասկածանք տանելու նորա գործերի արդարութեան մասին:

Զանազան թղթակցութիւններէց յետոյ միաբանութիւնը տեսնելով, որ նա չէ կարող իւր ցանկութեան յարմար գործել, այսինքն հրիտակի գումարը ստանալ իւր անկախ տիրապետութեան ներքոյ, տալիս է Լօնդոնի փաստաբան պ. Իննիսին հաւատարմատարի իրաւունք դատ բանալու Մուրատեանի ժառանգների դէմ (1821 ամի.): Դատ բանալու միաքը հաստատվում է Մխիթարեանների մէջ, երբ Յովհաննէսը ազդու և վճ-

ուղական նամակներով պարզօրէն յայտ-
նում է միաբանութեան, որ նա կտա-
կի իմաստով և զօրութեամբ անկարելի
և արդարութեան ընդդէմ է համարում
դրամ տալ միաբանութեան անպայման
կերպով: Յովհաննէսն առաջարկում է
միաբանութեանը մասնաւորապէս օգնել
նորան կատարելու կտակը, այնպէս որ
նա փարիզում հիմնէ փոքրիկ ուսում-
նարան, որոյ համար Մխիթարեանները
թող ուղարկեն ուսուցիչներ միայն և
ապա պարտաւորվում է ընդարձակել
այդ դպրոցը: Հասկանալի է, որ այդ ա-
ռաջարկութիւնը չէր դուր գայ մխիթա-
րեաններին, որոնք 2—3 միլլիօն ֆրանկ
Մուրատեան և ազդի դրամն և ժառան-
գութիւնը կամենում էին խրեանց սե-
փականացնել: Միւս կողմից Մխիթա-
րեանք զիմում են դէպի Մուրատեան-
ների մայրը, հարստահարելով նորա թոյլ
բնաւորութիւնն ու հաւատարմութիւնն և

հաղորդելով նորան զանազան անհիմն և անարդար տեղեկութիւններ ժառանգների վարուց մասին, ստիպում են նորան խորհուրդ տալ, ազդել իւր որդւոց վերայ վճարել հրիտակի գումարը Մխիթարեանց:

Անյաջողութիւն տեսնելով այդ միջոցի մէջ, Մխիթարեանք վարձեցին ^սփաստաբան Մինչին Մաղրասում, որ նա դատ սկսէ և ապահովացնէ կտակի դրամը, ստանալով և ղենելով նորան դատարանի գանձարանը: Աւելորդ չի լինիլ ասել, որ իսկ այդ միջոցին Յովհաննէսը կրկին և կրկին և աւելի վճռողական և պարզ կերպով նամակ գրում է Աբբային, թէ նա ոչինչ հաւատարմութիւն չունի դէպի միաբանութիւնն և թէ սորա չարագործութեանց դէմ նա բողոքում է բոլոր ազգին:

Միաբանութիւնը հրիտակի գումարը ձեռք բերելու համար կրկին դառնալով

մասնաւոր միջոցների, կամենում է օգուտ քաղել Մուրատեանների ցանկութիւնից՝ ունենալու Հնդկաստանում մի Հոգևոր հայր, խոստովանահայր, ուսուցիչ: Արկին անգամ ուղարկում է Հնդկաստան հ. Սարգիս Թէոդորեանին 1824 մարտի 23 ին տալով նորան գործակալական յայտարարութիւն, որի մէջ հարեանցօրէն տրվում է նորան և՛ իրաւունք դատ բանալու Մուրատեանների դէմ:

Հ. Սարգիս Թէոդորեանը հասնում է Մադրաս Մուրատեանների հաշուով, ընդունվում է նոցա տանը շատ սիրով և միև նոյն ժամանակ պահանջելով միաբանութիւնից նորից հաւատարմագիր հրիտակի վերաբերութեամբ, դատ է բաց անում Մուրատեանների դէմ: Ստանալով նոր գիր գործակալութեան Լադաքիվիչի միջոցով, Թէոդորեանը սկսում է բանակցել Մուրատեանների հետ, թէ

կարելի է վերջացնել վէճը հրիտակի գործի մասին, տալով նորա մի երրորդ բաժինն և խոստանալով 10,000 ռուբլի այսինքն 100,000 Ֆր. յօգուտ Թէոդորիանի: Բայց շարունակելով այդ բանակցութիւնը Եղուարդ Մուրատն և Լազարեվիչը՝ հասնում են այն եզրակացութեան, որ ժառանգները պիտի վճարեն Թէոդորեանին 1,600,000 Ֆր. և դորանով վերջանայ վէճը: Այդ պայմանն նմանապէս մնում է անկատար: Հարկաւոր է աւելացնել այստեղ, որ Լազարեվիչը, Եղուարդ Մուրատը և Սարգիս Թէոդորեանը այդ իրաւախոհութեան մէջ կամենում են օգուտ քաղել իւրեանց համար հրիտակի գումարից իբրև վարձատրութիւն իւրեանց աշխատանաց գործը յաջողութեամբ վերջացնելու համար. վերջապէս երկար վիճաբանութիւնից յետոյ Յովհաննէս, Եղուարդ Մուրատեանները և հ. Սարգիսը վերջացնում են

դործը կաղմելով ի 1827 ամի 26 մայիսի
1) ընդհանուր դաշնագիր իրաւախոհու-
թեան, 2) մուրհակ ազատութեան, 3) մտեր-
մական դաշնագիր և 4) պայմանաւոր
գիր ընդունելութեան:

Այդ պայմանագրերի դորութեամբ Ս.
Թէոդորեանը մաս առ մաս ստանում է
փողերն և իսկոյն փոխանակագրում է
վենետիկ: Մի և նոյն ժամանակ ընդ-
հանրական փաստարան Վամբատոն յոր-
դորում է տեղական դատարանին ստի-
պել Մուրատեաններին դնել հրիտակի
գումարը դատարանի մէջ յապահովու-
թիւն ժառանգների շահերին: Մուրա-
տեանները ստիպուած են լինում երկու
անգամ վճարելու մի և նոյն գումարը:
Այսպիսի դժուար դրութեան մէջ գտան-
վելով, Մուրատեանները զրում են մի
նամակ 10 հոկ. 1827 ամի վենետիկի
Աքքային, ցոյց տալով Սարգսի անխնայ
խաբեքայութիւնը, որ նա վերջացնելով

իրաւախօհութեամբ պործը, դարձեալ շարունակում է վէճը դատարանի միջոցով և խնդրում են օգնել նոցա դրութեան՝ զի մի գուցէ նոքա երկիցս վճարեն հրտակի գումարն: Իսկ Թէոդորեանը ունենալով իւր ձեռին դրամը՝ քնական է որ չէր կամենալ նորան վերադարձնել:

Այդպիսի դրութեան մէջ գտնուելով Մուրատեանները, զիմեցին դէպի տեղական առեւտր, որ տա յետ պահանջէ Թէոդորեանից վաճառականական քնկերութեան մուրհակը Շէրիֆի միջոցով և կամ նորան բանտարկել տայ, որոյ համար Մուրատեանները տարածեցին լուր, թէ Թէոդորեանը կասկածելի մարդ է, ստանալով գումարը, նա փախչել կամենում է Ամերիկա: Այդ գանդատի զօրութիւնով պօլիցիան և դատարանը տեսնելով որ Թէոդորեանը չէ կամենում փողերը յետ տալ, բանտարկեցին նորան: Այդ ժամանակ դատարանի միջոցով շարունակ-

վում էր Մուրատեանների և Թէոդորեանի վէճը: Մաղրասի դատարանը յորդորում է Թէոդորեանին դնել դատարանի գանձարանը առևտրական ընկերութեան մուրհակն՝ հրիտակի գումարը և այդ միջոցով դուրս գալ բանդից, որ և կատարեցաւ 22-ին յուլիսի 1828 ամի: Մի և նոյն ժամանակ Հ. Սարգիսը տալիս է դատարանին գանգատագիր զրամագլխի շահը սլահանջելու համար Մուրատեաններից, բացի Աննայէն, որ մեռնելիս իւր ունեցածը կտակեց ըստ յորդորման Հ. Սարգսի յօդուտ Մխիթարեան միաբանութեան (150,000 ռ.): Մաղրասու դատարանը գննելով Մուրատեանների և Թէոդորեանի վէճը՝ ընդունում է զլիսաւորապէս մի միտք՝ թէ ժառանգները և կտակակատարները տասը տարիներ անցուցին և «չինչ միջոց և ցանկութիւն չարտայայտեցին, որ նոքա կամենում են կատարել իրանց հօր

արած կարգադրութիւնը Հայոց որք և
աղքատ երեխանց վարժատուն հիմնելու
համար և ապագայումը ոչինչ երաշխա-
ւորութիւն չը կայ, թէ հրիտակի գումա-
րը կը ստանայ իւր նշանակութիւնը,
այն ինչ դատարանը պարտաւոր է կը-
տակի զօրութիւնը պահպանել և կատա-
րել: Ի նկատի ունենալով, որ Թէոդո-
րեանը Հայ կրօնաւոր է և միաբանու-
թիւնը պիտի ձեռնարկէ վարժարանի
հիմնարկութեանը, դատարանը մերժում
է Մուրատեանների դանդատը (1828)
թուին:

Նպատակաւոր եմ տեսնում դնել այս
տեղ յիշեալ կապակցագրերից մի քանի
տողեր:

«Շո հայր Սարգիս Թէոդորեան վար-
դապետ և անդամ Մխիթարեան միաբա-
նութեան, որ ի վկենետիկ, ունեղով ի ձե-
ռին իմում օրինաւոր եւ լիովի կարողութիւն
ի բոլոր միաբանութենէ իմմէ.....քննեցի

և ստուգեցի զամենայն հաշիւս, որք վերաբերին վեցերորդ յօդուածոյ կտակի հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատի և սովաւ խոստովանիմ և վկայեմ զի բովանդակ գումար դրամագլխոյ թողոյ ի հանգուցելոյն վասն կառուցման դպրատանն որք եւ ազբատ մանկանց ազգիս Հայոց, է 183,323 աստղի հուն, որպէս ցուցանէ հաշուազիրն, զոր յաւելցուք զկնի ի սմա:»

«Թէպէտ և հանգուցեալ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուրատեան ի կտակի իւրում կամի զի միջնորդութեամբ Մխիթարեան միաբանութեան, որ ի վենետիկ, կառուցի դպրատունն, սակայն բանք կըտակի չեն որոշ և ճիշտ (??), այսինքն դրականապէս ոչ ասէ՝ թէ դրամն զոր թողեալ է նա վասն կառուցման դպրատան յանձնեցի Մխիթարեան միաբանութեան, բայց եւ Սարգիս վարդապետ Թէոդորեան մտերմաբար խորհուրդ կարևոր

ետու նոցա (այսինքն Եղուարդ, Յովհաննէս և Աննա Մուրատեաններին) վստահանալով ի սէրն մեր որ առ ազգս Հայոց յանձնել միանգամայն միաբանութեան մերոյ զլերոյիշեալ բովանդակ գումարն ... խոստանալով նոցա (Մուրատեաններին) հաւատարմութեամբ ի կողմանէ եւ յանուն բոլոր միաբանութեան իմոյ կառուցանել, կարգել և հաստատել զղպրատունն և ըստ ամենայնի կատարումն տալ վերջին կամաց հանգուցեալ Աղայ Սամուէլ Մկրտիչ Մուրատիւ:

Հ ի ն գ ե Ր Ո Ր Դ . Հայր Սարգիսը պարտաւորվում է գետին գնել ստացած գումարով Գաղղիայում կամ Խտալիայում, ուր յարմար և աջողակ, ինպաստ որր եւ աղքատ մանկանց ազգիս Հայոց զըսրոցի, համարեացի միաբանութիւնը»....

Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ . «Ես հայր Սարգիս Թէոդորեան վարդապետ գործակալ և փոխանորդ մխիթարեան միաբանու-

թեան, որ ի վեհեօրիկ, խոստանամ և ի
կողմանէ և յանուն բոլոր միաբանու-
թեան իմոյ զի ամենայն կալուածք զըս-
րատանն զնեսցին յանուն ժառանգաց եւ կը-
տակակատարաց հանգուցեալ Աղայ Սա-
մուէլ Մկրտիչ Մուրատի իբրեւ բարերարի
ազգիս Հայոց և յանուն Մխիթարեան
միաբանութեան. իբրեւ մշտնջենաւոր
կառավարչի և իննամակալի զպրատան,
որպէս զի մի ոք կարող լիցի յապայն
սեփականել կամ օտարացուցանել ոչ ըզ-
կալուածս եւ ոչ զեկամբուս նոցա յո և է ժա-
մանակի և որով և իցէ պատճառաւ, ոչ
կտակակատարքն և ժառանգք նոցա,
ոչ Մխիթարեան միաբանութիւն և յաջորդք
նոցա, ոչ օտարազղիք եւ ոչ տղղ մեր զըւ-
խովին։»

Այնուամենայնիւ, որպէս զի Թէոդո-
րեանը կատարեալ իրաւունք ունենայ
փողերը ստանալու, որտեղից որ հարկն
է, թէ զատարանից և թէ ժառանգնե-

րից, միաբանութիւնը 22 ղեկաւորների
1828 ամի ուղարկում է նորան մի հաւա-
տարմագիր, որի մէջ գրած է, թէ նրան
տրվում է իրաւունք ստանալ հրիտակը
«վասն հիմնարկելոյ զղալրոց ի դաստիարակութիւն
որք եւ աղքատ մանկանց յազգէն Հայոց խոր-
հրդով եւ ձեռամբ Հայոց վննետկոյ միան-
ձանց»:

Երբ Թէոդորեանի կողմանէ յաճախ
զանգատներ են մտնում դատարան Մու-
րատեանների վերայ և այդ բանը վե-
նետկի միաբանութիւնը իմանում է,
30-ի յունիս 1829 ամի գրում է նա-
մակներ Թէոդորեանին և Նաղարեվեչին,
որոնց նախատում է և յայտնում է կար-
ծիք, թէ միաբանութիւնը իւր պատիւը
պաշտպանեց, իսկ ժառանգներին փա-
սել չէ պարտ: Բայց և այնպէս Թէոդո-
րեանը շարունակում է շահի և տուգան-
քի պահանջը, դատը Մուրատեանների
դէմ և դատարանը որոշում է յանձնել

հրիտակի փողը իւր շահով և տուգանք-
ներով Թէոդորեանին իբրև օրինաւոր
գործակալին Հայոց հոգևորականների
միաբանութեան ի նպաստ դպրատան
որբ և աղքատ մանկանց Հայոց ազգի:

Երկիւղ կրելով դատարանի վճռիցը՝
Մուրատեանները խնդրեցին Թէոդորեա-
նից և միջնորդներ ուղարկեցին նորա
մօտ, որ հա բոլորովին չը քանդէ Մու-
րատեան գերդաստանը, որ անգամ հա-
ցի կարօտ կը մնայ այդքան պարտքեր
ու տուգանքներ վճարելուց յետոյ և նե-
րէ նոցա տուգանքն և վաշխը, որ կանէ
600,000 ռուբլի այսինքն 2,000,000
Ֆրանկ: Այդ պատճառաւ հաշտու-
թիւն եղաւ դոցա մէջ 100,000 ռու-
բլիով, որ Թէոդորեանը ստացաւ 1832
թուի 31-ին մարտի, թէպէտ դատարա-
րանի վճռով հասանելի էր 600,000 ռու-
բլի: Կապուեցաւ մի առանձին դաշնա-
գիր, որոյ զլիսաւոր նպատակն այն էր,

որ Թէոդորեանը օգուտ քաղելով, որ ըն-
ծայեց Մուրատեաններին ազգին աւանդ-
ված երկու միլլիօն ֆրանկ, բոլորովին
ղրկէ կտակակատարներին վարժարանի
և դրամի կարգադրութեան մէջ խառն-
վելու իրաւունքից: Ամբողջապէս հրիտա-
կի ողջ գումարը Թէոդորեանը գանձա-
րանից ստանում է 7-ին յունիսի 1832
ամի: Այս կերպով ծախքը դուրս գա-
լով (այսինքն 100,000 ֆրանկէն աւելի),
Թէոդորեանը ստանում է կտակակատար-
ներից և ժառանգներից 798,649 Մատ-
րասու ռուֆի — 80,000 ֆունտ ստեր-
լինգ — 2,300,000 ֆրանկ, այս գումար-
ի շահը, որ կը վայելէ միաբանութիւնը
քառասուն և հինգ տարուայ միջոցում,
կանէ 4,500,000 ֆրանկ: Ուրեմն Միւսի-
թարեանք ունեցել են ազգային գանձ
իւրեանց ապօրինի տիրապետութեան
ներքոյ դրամապլուխ և շահ — 6,000,000
ֆր, որ ներկայ կուրսով մերձաւորապէս

3—4 միլիոն ռուբլի արծաթ կանէ:

Այդ երկու միլիոն դրամը Թէոդորեանը անցուցանում է Մխիթարեաններին ձեռքը, որ արդէն հիմնել էին Պաղուայումը Մուրատեան վարժարան: Հրիտակի պատմութիւնը, որ տեսում է 1783 թ. մինչև 1835 թուականը այսինքն 52 տարի, Թէոդորեանը վերջացնում է հետևեալ բառերով. «Մաղթեմ ազգին Հայոց ընտրել իւր դորձակաւք... որ կարողացին կորզել ի ձեռաց Մխիթարեան միարանութեան գոնէ զմասն բաժնի Լուսաւորչական մանկաւոյ ազգիս ի բաց մերժելոյ ի վայելից իրաւանց իւրոց»:

Ս. Թէոդորեանը գալով Վենետիկ, գտնում է Մուրատեան դպօրոցը արդէն պատրաստ Պատուայումը, բայց տեսնում է Թէոդորեանը, որ սորա նպատակն է հակառակ կտակի նպատակին,

որովհետեւ փոխանակ աղքատ, որք մանկունք ընդունելու, միաբանութիւնն ընդունում է զանազան տեղերից հարուստ մարդկանց որդիք, որոնք բարեկամ և ազգական էին Մխիթարեան միաբանութեան անդամներին, մինչև անգամ հոգալով նոցա ճանապարհի և հագուստի ծախսը: Այս հանգամանքն արդէն վիրաւորում է հ. Սարգսին, սա ակնարկում է Աբրային, որը թողնում է առանց ուշադրութեան այդ ակնարկութիւնը: Երևում է, որ իրեղէններ Մուրատեան ուսումնարանի համար գնված են 20,000 ֆր. բայց նոքա չեն մտել ուսումնարան: Դորանից առաջ ոմն Լազարեիչ գրում է նամակ Յովհաննէս Մուրատեանին Մ. ուսումնարանի անկարգութիւնների մասին և նորա հօր կտակի իմաստին և դադափարին հակառակ գործակատարութեան մասին: Այն ժամանակ Յովհաննէս Մուրատը գալիս է Եւրոպա իբրև կտակա-

կատար հաշիւ պահանջելու միաբանութիւնից ուսումնարանի և դրամի մատակարարութեանց վերաբերութեամբ: Յունիսի 30-ն 1838 թ, Յովհաննէսը գրում է Աբրայ Սոմալին, թէ ինչ դրութեան մէջ է ուսումնարանը, դրամը, թէ արդեօք ինչի վերայ են նոքա գործադրուած և գնած է արդեօք գետին և ուր: Սոմալը պատասխանում է անորոշ կերպով, թէ ամենայն բան լաւ է գնում, վարժարանը հիմնուած է և այլն, բայց ոչինչ որոշ բան թէ դրամի գործադրութեան և թէ աճեցման մասին չէ գրում: Այստեղից արդէն երևում է, որ միաբանութիւնը սկսել է խաբեբայութիւն և կամենում է ծածկել դրամն և նորա գործադրութիւնը:

Այնուհետև Յովհաննէսը հիմնուելով կտակի և դաշնադրութեան վերայ՝ պընդում է, թէ ոչինչ բան, պայման և դատաստանական վճիռ չի կարող այլայլել

կտակի իսկութեամբ կատարելը և իւրեան համարելով կտակակատար կրկին պահանջում է, թէ որքան դրամ առ ձեռքն կայ միաբանութեան ձեռքում և ում անուշով է գնած գետինը, որովհետև եթէ գետինը լինի գնած միաբանութեան անուշով և ոչ ընդ նմին և՛ Մուրատեանների անուշով, այն ժամանակ միաբանութիւնը կը սեփականացնէ իւրեան ողջ հրիտակի գումարը:

Սոմալը փաստաբանի միջնորդութեամբ պատասխանում է, թէ երբ միանգամ Մուրատեանները պայմանագրով հրաժարեցրել են իրանց հրիտակի ամենայն գործադրութիւնից, նորա այլ ևս չունին իրաւունք խառնուելու միաբանութեան գործերի մէջ, թէպէտ և Սոմալը հաւատացնում է, թէ ամեն կողմանէ կտակը կատարուում է համաձայն կտակարարի կամացն և գետինը գնուած է միաբանութեան և Մուրատեանի անու-

հով: Բայց Մ. Յովհաննէսը Ռափայելեանի ձեռով բողոքում է կանցլէր Մէտէր. նիխին, որ հրամայում է միաբանութեան տալ հաշիւ Մուրատեան ուսումնարանի մատակարարութեան մասին: Միաբանութիւնը ընդհանուր ժողովով որոշում է տեղափոխել Աւստրիայից ուսումնարանը, եթէ նրանից խստիւ պահանջեն այդ հաշիւը և յետոյ առ ժամանակ պատասխանում է Աւստրիացւոց կառավարութեան թէ միաբանութիւնը (Սմանեան հպատակ գտնով ազատ է համարում իւրեան հաշիւ տալուց Աւստրիացւոց կառավարութեան, թէպէտ և նա պատրաստ է ծանօթացնել ուսումնարանի հետ ամենեցունց, որք կը կամենան ծանօթանալ ուսումնարանի գործերի հետ (1840 թ.) Այնու ամենայնիւ միաբանութիւնը որոշում է ուղարկել Վիեննա երկու գործակալներ խնդիր տալու այդ մասին, որ առաջին վճիռը փոխեն, թէ-

ողորեանք իւր օգնականով գնում են վեննա և ամեն հնար գործ դնելով՝ ոչինչ չեն վաստակում, որովհետեւ յայտնում են նոցա, թէ նրանցից ոչինչ չեն կամենում լսել: Գործակալները յուսահատուելով 1844 ամի վերադառնում են վենետիկ մտածելով, որ Մուրատեան վարժարանը փոխադրեն կամ Լօնդոն և կամ Փարիզ, որովհետեւ Պօլիան անյարմար են տեսնում այդ նպատակի համար իբրեւ քաղաք, որոյ պետութիւնը թոյլ է և նոցա, այսինքն միաբանութեան, չէ կարող պաշտպանել զանազան պահանջներից: Երկու գործակալները՝ Սարգիսն և նորա ընկերը գալիս են Փարիզ և զանազան խորհուրդներ խնդրելով մեծամեծ անձինքներից, որոշում են Ֆրանսիացւոց տէրութեան տալ խնդիր, թէ կամենում են Մուրատեան ուսումնարանը տեղափոխել Փարիզ, որտեղ ծաղկում են և պաշտպանվում ամենայն ի-

բաւունք և գիտութիւններ: Օգնած է նոցա և Ռիչարտի փաշան: Այդ միջոցին Աւստրիացւոց տէրութիւնը էլի նեղում է միաբանութեան տալ կանոնաւոր հաշիւ և Յովհաննէս Մուրատը անդադար բողոքում է Աւստրիացւոց տէրութեան իւր կտակակատարութեան իրաւունքները մերժելու մասին միաբանութեան կողմից: Բացի այդ մասնաւոր անձինք՝ Հայերը բողոքում են Աւստրիացւոց տէրութեան առաջ, թէ Մուրատեան կտակը ողորմութիւն է ամբողջ ազգի Հայոց, իսկ միսիթարեանք հրիտակը իւրեանց են սեփականացրել: Այդ պատճառաւ կառավարութեան հսկողութիւնը առաւել սաստկանում է: Սոմալ Աբբան գրում է Թէոդորեանին, թէ քանի Մուրատեանները կենդանի են՝ միաբանութիւնը հանգստութիւն չի ունենալ և չէ կարող ինքնակամ կառավարել հրիտակի գումարը: Անճարացեալ՝ գործակալները

տալիս են աղերսագիր Ֆրանսիացւոց
տէրութեան 1844 թ. 30-ին նոյեմբերի
Աղերսագրի մէջ ասած է, թէ տեղա-
փոխվում է Մուրատեան վարժարանը Փա-
րիզ, զի վարժարանու այս հիմնեալ գո-
լով սակս առանձին ինչ նպատակի, որ
այն իսկ է՝ օժանդակել բարոյական վերա-
նորոգութեան Հայաստանի յարմար է նրան
լինել Փարիզում: Միւս կողմանէ Սոմա-
լը ընդդիմանում է Փարիզ ուսումնա-
րան հիմնելու, որովհետեւ մեծ ուսումն
ստանալով երիտասարդները ճարտարեն
ղՀայն եւ զՀայաստան՝ ասում է և երկիւղ
յայանում է, թէ գործի յապաղութիւնը
կը վնասէ ոչ թէ միայն ազգին՝ այլ եւ կը-
րօնին:

Ֆրանսիական նախարար Գլիզոն տա-
լիս է թոյլատուութիւն կառավարութեան
կողմից 19 մայիսի 1845 ամի հիմնել
Հայկազեան ուսումնարան ընդ հսկողու-
թեամբ Նախարարին: Սորանից յետոյ

Թէոգորեանն և ընկերը որոնում են մի տուն փարիզում վարժատան համար, և գտնում են գնահատուալ 400,000 ֆր.: Գրում են նոքա միաբանութեանը, թէ Գաղղիացիք կամենում են, որ առանց խտրութեան դաւանութեան ընդունվեն երեխայք այն ուսումնարանումը, որովհետև, ասում են նոքա, Գաղղիացին ոչ գիտնական և ոչ պատմական կէտից նայելով չէ կամենում հասկանալ, որ ազգութիւնը չէ զանազանվում դաւանութիւնով, որ ազգութիւնն ընդհանուր գաղափար է, որ կը պարունակէ իւր մէջ չափ դաւանութիւններ:

Սոմալ Արքան պատասխանում է մեղ թերեւս զգուշալի է ոչ յաղադս այլ ինչ իրաց, բայց եթէ ի հռչակել ձայնին ոչ մնայցէ մերոց տեղի ի վարժարանի:

Ասացաք մանկունս ժողովել աստի և անտի յազգէս, քանզի Գաղղիացիք ցանկան և ական ունին զի յամենայն կող-

մանց և ի դաւառաց ազգիս ածցին այսր
մանկունք, որպէս զի առ ժամանակ լու-
սաւորեսցին և անուն նոցա սփռեսցի
յարեւելս և զի կարծեն սոքա թէ առանց
խտրելոյ ընդունեմք մեք ի դպրոցս մեր
դմանկունս ի հերձեալ Հայոց: (Գաղղի-
ացիք չկարեն կարծել բնաւ թէ խտրու-
թիւն կրօնի, որ ի մէջ ազգի միոյ կա-
րիցէ խափան լինել երբէք ընդունելու-
թեան հասարակ մանկանց նորին յազ-
գային դպրոց): Այդ պատճառաւ թէո-
դորեանը խորհուրդ է տալի ուղարկել
մարդիկ «Հայաստանի քաղաքները» ե-
րեխայք ժողովելու վարժարանի համար:
1845 թ. նոյեմբերի 9-ին Աւստրիայի
կայսերութիւնը դարձեալ պահանջեց
միաբանութիւնից հաշիւ՝ մերժելով նոցա
բողոքն այդ մասին և ճանաչելով մի-
անգամայն Յովհաննէս Մուրատի իրա-
ւաւունքը նոցանից հաշիւ պահանջելու
և իւր կտակակատարական իրաւունքնի-

րը պաշտպանելու: Այդպիսի կարգադ-
րութեան դէմ միաբանութիւնը տուեց
յայտարարութիւն՝ մեկնելով թէ վարժա-
րանը փոխադրվում է Փարիզ, և յայտնե-
լով, թէ Մուրատեանը կամեցել է հիմ-
նել ուսումնարան յօգուտ աղքատաց Հա-
ոց սփռեալ յարեւելս: Այնու ամենայնիւ
կարծելով թէ Մուրատեանը կարող կը
լինի խառնուել կալուածների կառավա-
րութեան մէջ, որ գնուած են հրիտակի
դրամով, միաբանութիւնն որոշում է
կեղծ կերպիւ ծախել նրանց իւրեանց
փաստաբանին: 1846 թ. 11-ին փետրվա-
րի գնում են նոքա Փարիզում մի պա-
լատ, որ կարկատանների ծախքով, նըս-
տում է առաւել քան 400,000 Ֆրանկ:
Լսելով այդ արարմունքը պապը՝ պա-
հանջում է զարձեալ տեղափոխել ու-
սումնարանը Պաղուայ, բայց միաբանու-
թիւնը հակառակում է:

1846 թ. 35 երեխայք՝ կաթովիկ և

Լուսաւորչական բերվում են Կ. Պօլսից
Փարիզ Մուրատեան ուսումնարանը :
Միաբանութիւնը յորոգորում է գործա-
կալներուն ստանալ ուսումնարանի հա-
մար թագաւորական հրովարտակ, որոյ
յօդ. 7. ասում է, այն աշակերտք և եթ
ընդունելի լիցին անդր, որք հայկազունք
իցեն: Այստեղ նմանապէս Մուրատեան
Յովհաննէսն աշխատում է հանել հրո-
վարտակ հաշիւ տալու մասին, որ և
կատարում է ապագային: Այստեղ նը-
շանաւոր է յիշել, որ մեծ բանակցութիւն
և վիճարանութիւն է ծագում Ս. Թէո-
դորեանի և միաբանութեան մէջ ծախուց
վերաբերութեամբ, որ միաբանութիւնը
չէ կամենում բաւականին դրամ հասու-
ցանել ուսումնարանի պիտոյքը լրացնե-
լու համար, այնպէս որ մինչև անգամ
կամենում են Փարիզում գնած տունը
դրաւ դնել, որ բարեբաղդաբար չէ յա-
ջողում:

Սկզբում ուսումնարանի գործերը շատ
լաւ են գնում, բայց թէոդորեանը սաս-
տիկ յանդիմանութիւն է գրում միաբա-
նութեան, որ սա միանգամայն ի չարն
է գործ դնում ձեռք բերած իրաւունքը
անուղիղ մատակարարելով Հայոց ազգի
որը և աղքատ մանկանց շահերը և թող-
նում է վարժարանի վարչութիւնը
պարտքի մէջ: Այնտեղ, ուր հարկաւոր
են տասը հազար ֆրանկներ, միայն հա-
զարներ են ուղարկում և այն: Այդ բա-
նը տալիս է առիթ Սարգսին մեծամեծ
մեղադրութիւններ դնելու միաբանու-
թեան վերայ: Երինակ թէոդորեանը գը-
րում է թէ հրիտակի դուրսի շահն իւ-
րաքանչիւր տարի կանէ 100,000 ֆր.,
որ 15 տարումը կանէ 1,500,000 ֆր.
այն ինչ Մուրատեան վարժարանի ուս-
ման ծախքը եղել է 15 տարուայ դո-
յութեան ժամանակը 360,000 ֆրանկ.
իսկ մնացածը ինչ լինելն և ուր գնալ
անյայտ է (1847 ամի):

Ի նկատի ունենալով Հ. Սարգսի մըշտական գանդատը, որ ուսումնարանի կառավարութիւնը և գործերը շատ դանդաղ են գնում, միաբանութիւնը որոշում է ուղարկել Փարիզ ուսումնարանին ծառայելու Հ. Գաբրիէլ Այվազովսկուն և Հ. Գալֆայանին 1848 թ. Դոցա գալու առթիւ Թէոդորեանը գրում է Հիւմիւզին յանդիմանութեան նամակ որով նա ապացուցանում է, թէ միաբանութիւնը քանդում է բարերարի կտակի միտքը և ապագան, զգուշացնելով թէ զրկելով ազգին այդ բարութիւնից միաբանութիւնը կընկնի պատասխանատւութեան ներքոյ և ինչպէս կտակակատարները, նմանապէս պետութիւնները կարող կը լինեն հեռացնել միաբանութիւնը այդ իւրեանց իրաւունքից վարժարանի և դրամի վերայ, և թէ ազգը մի օր ընդհանուր հաշիւ կը պահանջէ միաբանութիւնից սորա անկանոն մատակարար-

բութեան մասին և գրում է Հիւրմիւզին
բացի այդ մեծ սպառնալիքներն և՛ օրի-
նաց ու ազգի կողմից: Այս գանգատի
դէմ միաբանութիւնը պատասխանում է,
թէ ինքը միաբանութիւնը կտակը հաս-
կանում է և կատարում է ընդհանուր
ազգի համար, միայն արգելքներ են լի-
նում նորան, օրինակ. պատրիարկ Մատ-
թէոսը նոյով անգամ կարդաց այն ծնողաց,
որոնք իւրեանց մանկանց կուղարկեն
Փարիզ, որպէս զի կրօնափոխ չը լինեն
միաբանութեան վարչութեան ներքոյ:
Այսպիսի կերպիւ շարունակվում են փո-
խադարձ մեղադրութիւնք Թէոդորեանի
և Հիւրմիւզի մէջ դանազան անկարգու-
թեանց մասին, որ կատարվում էին և որ
հակառակ էին կտակի մտքին: Ի վեր-
ջոյ տեսնելով որ 1) վարժարանը բոլոր-
ովին չէ ծառայում կտակի նպատա-
կին, 2) ծախքը շատ է և 3) հարկաւոր
է ծառայեցնել ուսումնարանը բարեբարի

կամքին և 4) երկիւղը Մուրատեանից, որ միաբանութեան միշտ գլխադրում էր, որոշում են վարժարանը տեղափոխել Պօլիս, միայն անհետ ծախել Փարիզի տունը: Երեւելի է այն նամակը, որ Սարգիս Թէոդորեանը գրում է Հիւրմուղին, թէ երբ Եղուարդ Մուրատեանը հարցնէ նրան, թէ ինչ դրութեան մէջ է հրիտակը, դրամն և ինչ է եղել ուսումնարանը և ինչ յառաջադիմութիւն ունի, ինքը չէ կարող ոչինչ պատասխանել. որովհետեւ ուղիղ պատասխանը չափազանց կը վնասի միաբանութեանը, իսկ սուտ խօսելը մարդու խղճմտանքը՝ չէ ներում:

Այդ միջոցին պատը կամենում է տանել վարժարանը Հռովմ և բոլորովին իւր հսկողութեան ենթարկել Հռովմէական պրօպագանդայի միջնորդութեամբ և այդ լինում է գլխաւորապէս Եղուարդ Մուրատեանի կարճատեսութիւնից, որ

միակ հնար էր համարում այդ վարժա-
րանը Մխիթարեանների ձեռքից հանե-
լու համար (ի 1850 ամի.): Սրբ Հռովմ
տանեւո. գաղափարն էլ սառեցաւ, այն
ժամանակ դարձեալ պապականութեան
ազդեցութեան ներքոյ Հիւրմիւզը գրում
է մի համակ Սարգիս Թէոդորեանին թէ
« Արդ մեք ղհետ եմք հետազօտել աստ
թէ մարթ իցէ արդարացուցանել
դայս մեր զործ, ապա թէ ոչ այս իցէ
մեր առ այն պատասխանի, զի ըստ հարկի
բանից կտակողին, ու ի դաստիարակութիւն
հայապղի մանկաւոյն կարգէ անխտիր զվար-
ժարունն, ի նոցունց իսկ ի հերձուածոց
ստիպեալք յանձն առաք ընդունել և
ղնոցա որդիս, պայմանաւ ուսուցանելոյ
նոցա զուղղափառ վարդապետութիւնս
Հռովմէական եկեղեցւոյ, յուսալով զի
վարժեալք յայն, ընդեւացին ի նոյն և
շահեցին մանկունք: Բայց տեսեալ ա-
պա զի ի դառնալն սռ իւրեանցսն հա-

Նապաղորդեն կալ միւս անգամ ի հերձ-
ուածս իւրեանց, արձակեցաք զնոսա եւ ոչ
առնումք զոր ի նոցանէ»:

Այդ խօսքերին հ. Սարգիսը տալիս է
երեւելի պատասխան իւր նամակի մէջ
Հիւրմիւլդին, որ գրված է 25 հոկ. 1850
ամի:

«Զերկրորդս զայս չը կարեմք մեք
չառնուլ զի բարերարութիւն դպրոցացս այս
մերոց է անխտիր վասն ամենայն Հայոց: ...
... «Մեզ թուի թէ միաբանութիւնս մեր
պարտի մահու չափ զգուշանալ ի խոր-
հըրդոց անտի խոստանալոյ Ֆաւալոցին
ոչ ես ընդունել աշակերտս ի Հայոց ան-
տի, զի վտանգ է զրգուելոյ զրովանդակ ազգն,
եւ իրաւամբք, ընդդէմ մինչև եկեղեցւոյն
միանգամայն ... Թողից ասել զխղճէ մտացս,
որ ըստ անթերի կատարման կամաց բարերա-
րաց: Ճշմարիտ է, զի այժմ սակաւ են
Հայք, որ յօժարին աշակերտել զման-
կունս իւրեանց, բայց մեք գոնէ յիրա-

ւունս մեր կամք և կարեմք ասել ցնոսա
և ասեմք իսկ համարձակ, թէ դարոցք մեր
բաց են առաջի ամենայն հայադղի մանկանց
անխտիր: Այլ եթէ յանձնարարութիւն
ինչ առնիցեմք գրով կամ բանիւ կամ
գործով, թէ ոչ ընդունիմք մեք զՀայո
ի վարժարանս մեր, կորուսանեմք զիրա-
ւունս մեր եւ վնաս մեծ առնեմք ազգիս եւ
եկեղեցւոյ: Գլխասջիք Գեր. Տէր, զի ըստ
կարծեաց մերոց, նոյնչափ վնասակար է այս
առաջարկութիւն, որչափ եւ փոխադրութիւն
վարժարանիս ի Հռովմա:

Պապի ազդեցութիւնը և սաստը Հիւր-
միւզ Աբրայիմ ունենում է այն հետեան-
քը, որ սա կամենում է բոլորովին հն-
թարկել Մուրատեան վարժարանը Հռով-
մի հոկոդութեան և դարձնել միանգա-
մայն պապի գործիք: Այդ բանը երևում
է նրանից, որ Հիւրմիւզ մի երդմնաթուղթ
է ուղարկում պապին, որով յայտնում
է իւր կատարեալ հպատակութիւնը պա-

պին բոլոր միաբանութեամբ: Այդ յայտարարութիւնը բաղկանում է 10 յօդուածից և ունի Հաւատամքի ձև և յոյց է տալիս, որ միաբանութիւնը պարտաւորւում է բոլորովին հրաժարվելու հայութիւնից, Հայերից և կրթելու ուսումնարաններում մանկանց Հռովմէականութեան ոգւով:

«Ողբալի վիճակ միաբանութեան... Ո՛չ ապաքէն պարտ և արժան է ինձ զայն առնել, զոր խիղճ մտացս չը կարէ լուել, զոր պատիւ անձիս պահանջէ, զոր սէր աղգիս ստիպէ և արդարութիւն բռնադատէ, և զոր յիշատակ երեսուն և վեց ամաց վաստակոյս չը կարէ երբեք մոռանալ, այս է ապահովել ստացուած Մուրատեան վարժարանին, անցուցանել տալ ի մուրհակս այն ստացուածոցնորա զանուն ժառանգաց բարերարին ըստ դաշանց, որ ի մէջ իմ և նոցա և եւ զոր հաստատեաց համօրէն միաբանութիւնս ստո-

րադրութեամբ խրով եւ ըստ պահանջման
Յովհաննու Մուրատի, որպէս զի չը կարիցէ
միաբանութիւնս օտարացուցանել զայն եւ կարգել
տալ ի կողմանէ ժառանգաց բարերա-
րին խնամակալ վարժարանին, որպէս զի
անաչառութեամբ լիցի ընտրութիւն
մանկանց զպրոցին եւ արդարութեամբ
մատակարարութիւն նորին, վայելել հա-
մօրէն ազդիս զիրաւունս իւր, ըստ դիտաւորու-
թեան բարերարին քննել ճիշդ զել եւ զմուտ
վարժարանին եւ պաշտպանել զյառաջադի-
մութիւնն նորին ի խափանարարաց եւ ի վը-
նասակարաց, զրում է հ. Սարգիս:

Քաջալերուելով Հիւրմիւզի ստորհագի
եւ միանգամայն կեղծաւոր «յայտարա-
րութիւնով», պատը գրում է Փարիզու
արքեպիսկոպոսին եւ նախարարին, որ
փոխադրեն Մուրատեան վարժարանը
Հռոմ: Նախարարը խորհուրդ է տալիս,
որ հ. Սարգիս Թէոդորեանը իւր ընկեր-
ներով ենթարկեն կառավարութիւնը

ուսումնարանի նախարարութեան և այն
 ժամանակ պապը կղաղարացնէ իւր պա-
 հանջը: Իսկ Փարիզի արքեպիսկոպոսը,
 ստանալով Սարգսից պատասխան, թէ
 Մուրատեանը բռնութիւն հակառակ է
 այդ փոխադրութեան, յայտնում է այդ
 պապին: Մի և նոյն ժամանակ Թէոդո-
 րեանը յորդորում է Յովհաննէս Մու-
 րատին պաշտպանել պապի դէմ իւր և
 ազգի իրաւունքները վերաբերութեամբ
 վարժարանին. իսկ Մուրատը զգուած
 դուրս Միսիթարեաններից, չէ կամենում
 հետեւել Սարգսի խորհրդին: Բայց Պօլսե-
 ցի Հայք դրում են մի խնդիր Գաղղիոյ
 կառավարութեան՝ խնդրելով թոյլ չտա
 փոխադրելու ուսումնարանը Հռոմ
 իսկ պապը դրղած Հասունից և Հիւր-
 միւղից՝ կամենում է փոխադրել այն,
 երբ հակառակողները կը հեռանան ու-
 սումնարանից: Ստիպուած դանաղան
 սպառնալիքներից և յորդորմունքներից՝

հեռանում են Գ. Այվազեանն և Ամբրոսիոս Գալֆայեանը, որոց պատճառով մեծ թշնամութիւն և անկարգութիւն է ծագում աշակերտների մէջ: 1855 ամի ապրիլի 11-ին Հիւրմիւլը գրում է հրամանագիր Ս. Թէոդորեանին հեռանալ Մուրատեան վարժարանից: Այս առթիւ Հ. Թէոդորեանը գրում է Հիւրմիւլին մի տարտախելի անէծքով և հայհոյանքով լի պատասխան, պաշտպանելով իւր անձն և դործը: Հիւրմիւլը դատ է բաց անում Գաղղիացւոց դատարաններում Թէոդորեանին դպրոցից հեռացնելու նըպատակով և դատարանն ընդունելով, որ թէպէտ ուսումնարանի խնդիրը քստ իրաւանց ազդիւստ այսինքն Գաղղիացւոց, չի պատկանում Ֆրանսիայի դատարանին, այնու ամենայնիւ կարգ պահպանելու համար այնտեղ, որ մի գուցէ փոխադարձ յանդիմանութիւնից անկարգութիւններ ծագեն, հարկաւոր է տեսնում

որ Թէոդորեանը հեռանայ վարժարանից։
Հիւրմիւզը անկարգութեանց առաջն առ-
նելու համար, վարժարանում մինչեւ ան-
գամ ժանդարմներ հիւսկիրել կարգադ-
րում է, որպէս զի աշակերտներին եր-
կիւղ տայ։ Անդատուելով և պարսաւան-
քով հանում են Հ. Սարգսին վարժարա-
նից։ Նա գնում է Հ. Գաբրիէլի սենեա-
կըն օթեան որոնելու։ Դորանից յետ
Հ. Սարգիսը կրկին յորդարում է Յով-
հաննէս Մուրատին բողոքել միաբանու-
թեան դէմ, իսկ Յովհաննէսը միանգա-
մայն մերժում է ամեն հոգս վարժարա-
նի վերաբերութեամբ։

Այսպիսի կերպով Մուրատեան վար-
ժարանը ընկնում է Մխիթարեանների,
աւելի լաւ տուել, պապի ձեռքն և շա-
րունակում է իւր զոյսութիւնը մեծ թե-
րութիւններով հակառակ Մուրատեանի
կտակի նպատակին, խմատին, կտակա-
կատարների կամացը և աղգային ժա-

ռանդութեան իրաւանց: Մխիթարեան
 միաբանութիւնը պրօպօզանդայի ազդե-
 ցութեան ներքոյ միանգամայն տիրապե-
 տում է վարժարանին և նորա ստաց-
 ուածքներին և մերժում է ամենայն ի-
 րաւունք ձեռնամուխ լինելունոցա գոր-
 ծերին և ուսումնարանի մատակարարու-
 թեան: Այդ պատճառով Հայ Լուսաւոր-
 չական աշակերտների թիւը զպրոցում
 նուազում է, իսկ Ֆրանս—Պրուսական
 պատերազմի սկսվելից յետ նա առ ժա-
 մանակ փակվում է: Մտադրութիւն կար-
 ի հաճոյս պապին նրան տեղափոխել Հը-
 ուովմ, քայց տեղեկութիւններից երևում
 է, որ նա այժմս վկենետիկումն է միայն
 ոչ իբրեւ առանձին ուսումնարան, այլ
 իբրեւ Ռաֆայելեան վարժարանի կղերա-
 կան խառնուրդի մասն: Այդ ժամանակ-
 ներից Հայ Լուսաւորչականների համար
 Մուրատեան վարժարանը խափանված է,
 և դարձել է իսկ պրօպօզանդայի հիմ-

նադրութիւն միանգամայն ընդդէմ հան-
դուցեալ Սամուէլ Մուրատի կտակին և
կամքին: Ոչ ոք չունի տեղեկութիւն ոչ
ելից և ոչ մտից մասին, ոչ կալուածե-
րի դրութեան մասին և ոչ վարժարանի
մատակարարութեան մասին:

Ահա Մուրատեան վարժարանի համա-
ռօտ և ողբալի պատմութիւնը:

III.

Վերոյիշեալ պատմութիւնիցը երեւում
է, որ Սամուէլ Մուրատի հրիտակի
գումարը, այդ գումարի մի մասով գնած
անշարժ կալուածն, Մուրատեան վար-
ժարանը, սորա ուսումնական և նիւ-
թական մատակարարութիւնը միանգա-
մայն ընկած են Մխիթարեան միարա-
նութեան ձեռքը, բոլորովին ենթարկ-
ված պրօպագանդային և միաբանութեան
սեփականութիւն դարձած, որոյ հիման
վերայ կաթողիկոսութիւնը մերժում է ադ-
գիս իրաւունքը, որ նուիրել է նրան
բարերար Ս. Մուրատը իւր կտակով:

Ես կարծում եմ, պարոններ, որ Մու-
րատեանի կտակի ձեզ արդէն յայտնի
վեցերորդ յօդուածի իմաստի, բառի
և նպատակի խանդարումն, աղաւաղելը
յիշեալ միաբանութեան կողմից ձեզ
հասկանալի է։ Դուք անսաք պատմու-
թիւնից, որ միաբանութիւնը սկզբումը
գործում էր իբրեւ աղղի ներկայացուցիչ,
և աղղային վարժարանի համար միջնոր-
դող և խորհրդակից, իսկ ի վերջոյ նա
մերժեց աղղի և կտակակատարների ի-
րաւունքը և ենթարկեց նրան իւր ան-
սահման ընտրողութեան և որոշման։
Այդ տեղից հետեւում է, որ այսօր Մու-
րատեան վարժարանը, որ մինչև անգամ
հաստատուն հիմնադրութիւն չէ երե-
ւում, մի հայ լուսաւորչական երեխայ չէ
դաստիարակում։ Դորա մասին ես ման-
րամասնօրէն կխօսիմ յետոյ, իսկ այժմ
կշտապեմ լուծել այն մեծ խնդիրը, որ
արդէն ծագել է ձեր գլխումը այն է՝

1) Ունեն արդեօք Հայ լուսաւորչականները իրաւունք Սամուէլ Մուրաթի հրիտակի դումարի վերայ, որոյ մասին մենք այսօր խօսում ենք: Կարելի է արդեօք համարել նոցա ժառանգներ Սամուէլ Մուրաթի կտակով որոշած: 2) Առհասարակ կարո՞ղ են հայ լուսաւորչական որք և աղքատ երեխայք շահիլ յիշեալ հրիտակի դումարից, որ սա գործադրվի նրանց ուսում տալու համար:

Ուշադրութեամբ լսեցէք դուք, պարոններ, այս երեկոյեան զրոյցի պարտնակութիւնը, և այնուհետև ես ունեմ վստահութիւն ձեզ արդէն յայտնի փաստերի և աեղեկութիւնների հիման վերայ հաստատօրէն ձեր այդ հարցին տալ զրուական պատասխան: Հայ լուսաւորչականների, այս դիպումածում, ժառանգական իրաւունքները անհերքելի և ճանաչուած են, ինչպէս անհերքելի է և ճանաչուած Ս. Մուրաթի կտակը:

Առաջ քան զհեղ աշտոնի՝ ապացոյց-
ներ իմ այդ պատասխանին, ես ասեմ
ձեզ թէ ինչ ըննդիմութիւն առաջ է բերում
կաթողիկոսութիւնը զրկելով մեր երեխա-
ներին նոցա սրբազան իրաւունքից: Կա-
թողիկոսութիւնը ասում է. Սամուէլ Մուրա-
տը Հայ Կաթողիկ էր: Սամուէլ Մուրա-
տը հետեւեց Եղուարդ Ռաֆաէլեանին, որ
կտակեց որոշեալ գումար յօգուտ կաթո-
լիկներին(?) Սամուէլ Մուրատը Ռաֆա-
յէլեանի փեսան էր, Սամուէլ Մուրատը,
ինչպէս որ (իր) ընդունեց Մուրատեա-
նը, վարժարանի ձեռնարկութեանը մա-
տակարարութիւնը յանձնեց Մխիթա-
րեան Հայ-Կաթողիկ միաբանութեանը:
Այստեղից պարոնայ.ք. պրօպօզանդան ա-
նում է մի անհեթեթ եղբակացութիւն
թէ՝ ուրեմն, ինքն ինքնիշխան է, տէր է
և՛ հրիտակին և՛ վարժարանին:

Այդպիսի փաստաբանութիւնը պարու-
նակում է իւր մէջ չորս ստութիւն,

սուտ է նա իբրև տրամադրութիւն, սուտ է նա եթէ պատմական կէտից: Կայենք խնդրին վերայ, սուտ է իբրև փաստ, սուտ է և՛ իբրև իրաւունք:

Ասացէք, խնդրեմ, Տաճկի, Քուրդի սուրը, որ կիսում է Հայ երեխայի մարմինը մօլեռանդ հարուածով, — այդ սուրը հարցնում է արդեօք թէ երեխայի մարմինը Հայ-կաթովիկի է, թէ Հայ լուսաւորչականի: Արդ Հայը պաշտպանում է իւր մարդկային և ազգային իրաւունքները փաշայի, սարդարի, նախարարի, Սուլթանների և զանազան վեհաժողովների առաջը — սրոյնում է և սրոշկ է մի բողբէ անգամ թէ նա լուսաւորչական կամ թէ կաթովիկ է: Արդ Հայը պատգամաւորներ ազարկում է Արոպա իրաւունք և խնդրեմ խնդրելու, դժադրում է Հայաստանի աշխարհադրական քարտէզ և նախապիծներ կադմում է Հայութեան և Հայի մասին, բաժա-

նո՞ւմ է նա արդեօք այդտեղ հայ կաթո-
լիկներին — լուսաւորչականներից: Յե-
տոյ ես կկամէի պրօպօզանդայի յիշեալ
մտածողութեան դէմ մի հարց դնել: Ա-
թէ Բերլինի վեհաժողովը տար Հայաս-
տանին այն ինքնօրինութիւնն, որ նա
խնդրում էր, — Հայ կաթոլիկները կա-
մաւոր կերպիւ կզրկէին արդեօք իւրեանց
այդ ինքնավարութեան իրաւունքներից:
Աթէ մի լուսաւորչական հայ թողնէ
մի կտակ «յօգուտ բովանդակ Հայոց
ազգի սփռեալ յարեւելս», կցանկային ար-
դեօք հայ կաթոլիկները օգուտ չքաղել
այդպիսի կտակից: Այսօր իսկ դուք
կարդացիք Պօլսոյ լրագիրների և թըղ-
թակցութիւնների մէջ, թէ զանազան
ընկերութեանց կանոններն, որք կազ-
մըված են օգնելու Հայաստանի լուսա-
ւորութեան և բարեւաւութեան, (Արա-
րատեան: Արեւելեան և այլն), ունին յօդ-
ուած, որ ընդունում է ընկերութեան

անդամ այն մարդուն, որոյ մէջ «Հայի արիւն է հոսում» անտարբեր, լինի նա կաթուղի կամ լուսաւորչական: Երբ Հիւրմիդ արքան ձգտում էր Մուրատեան վարժարանը տանել Հռոմ, Հայ կաթուղիկները Ֆրանսիացւոց կառավարութեան խնդրեցին արդելել այդ բանը, որովհետեւ այդ դէպքով Մուրատեան վարժարանը կդառնար Հռոմէականութեան պաշար և կերակուր և չէր ծառայիլ Հայ ազգի շահերին: Այդպէս է այն կանոնաւոր և արդարացի ազգային գաղափարը, որ ունեցել է Հայը իւր ազգային ծագման և ընդհանրութեան մասին: Ուրեմն Միսիթարեան միաբանութեան յիշեալ որոշումն է օտար, և Հռոմէական կաթուղիկութեան մտածողութեան ծնունդ, որ Հայութեան կէտից միանդամայն մերժվում է: Ուրեմն միաբանութեան մտածողութիւնը միանդամայն հակառակ է Հայ ազգի մտածողութեանը:

Մխիթարեան միաբանութեան վերո-
յիշեալ ընդդիմութիւնը ստովում է և
պատմութեան հայեացքով: Նայենք թէ
ինչ և ինչպէս է եղել Հայոց մէջ կաթո-
լիկութեան տարածվելը:

Հռովմէական կաթոլիկութիւնը մը-
տած էր մեր ազգին մէջ հախ Ժ.Գ. դա-
րուն սկիզբները քարոզութեամբ լատին
կրօնաւորաց, որք օգուտ քաղելով Հա-
յաստանի անիշխանութենից և բազմա-
դարեան տառապանքներից՝ իւրեանց
համար վանքեր և ուսումնարաններ հաս-
տատեցին Արարատեան հաճանգին մէջ,
և ամենայն կերպով աշխատեցին տարա-
ծել ազգիս մէջ հռովմէական դաւանու-
թիւնն և լատինական ծէսերը կամ արա-
րողութիւնները:

Բայց կաթոլիկ Հայերը հարիւրաւոր
տարիներով այսինքն մինչև 1830 տա-
րին, մանաւանդ Օսմանեան տէրութեան
պռջև, ջոկ ազգ և առանձին քաղաքա-

կան վարչութիւնն ունեցող ժողովուրդ չէին համարվում, այլ շենթարկուած էին Հայոց պատրիարքարանին Պօլսոյ և ինչ եկեղեցի էլ յաճախէին՝ համարվում էին Հայ, պարտական էին իւրեանց երեխայքը կնքել տալ Հայ քահանայից, նմանապէս նոցա թաղել տալ իւրեանց մեռելները և օրհնել տալ պսակները:

Ապա ուրեմն ժ. դարու սկզբէն մինչև 1830 թուականը կաթողիկ Հայ ժողովուրդ չըկար պաշտօնական կերպով ազդ ճանաչուած, այլ Հայ անունը տրվում էր որ և իցէ հայազգի մարդու՝ առանց նորա դաւանանքը կամ հաւատքը հարցնուելու և այսօր ևս կաթողիկոսութիւնը ճանաչուած է իբրև կրօն և ոչ իբրև ազգութիւն:

Տարակոյս չկայ ուրեմն որ բարեյիշատակ Սամուէլ Մկրտիչ Մուրադը՝ թէպէտ բնիկ Շուոթեցի կաթողիկոսներէն էր դադթեալ Հնդկաստան, բայց չէր

դատուած իւր հայրենի Հայաստանեայց եկեղեցիէն ոչ նիւթապէս և ոչ բարոյապէս: Ուրեմն անիմաստ պիտի համարվի այն մարդը, որ կկարծէ թէ Սամուէլ Մուրատեանը, որ զրեց իւր կտակը 1808 թուականին, ունէր այն ազգութեան գաղափարը, որ ունի այսօր Մխիթարեան միաբանութիւնը, ունէր Հիւրմիւզը և Հասունը, և որ վերաբերութեամբ կրօնին պաշտօնապէս որոշվեցաւ միայն 1830 թուականին: 1808 թուականին գրված կտակը պիտի մեկնվի այդ ժամանակուայ հոգևով և գաղափարներով, և ոչ թէ երեսուն թուականների գաղափարներով: Պատմական և իրաւաբանական գիտութեանց կանոններին միանգամայն հակառակ է այսօրվայ կանոնները վերաբերել այն երևոյթին, որ իւր ծագման օրը ենթարկվում էր այլ կանոնների և այլ զգացմանց ու մտածողութեան հետեանք էր:

Մխիթարեան միաբանութիւնն ինքն
բովանդակ աշխարհի առաջին խոստովա-
նել է խօսքով և բերանով, որ կրօնի
զանազանութիւնը, որն կայ Հայ - զգի
մէջ, չէր բաժանում այդ ազգը անմիա-
նալի մասեր, մինչև նա չէր ենթարկ-
վել պապի զարհուրելի ազդեցութեան
և ծաւալոցի հետ միշտ կեղծաւորութիւն
է բանեցրել իւր անկախութիւնը և
ստացուածները պահպանելու համար:

Այդ բանը երևում է Հիւրմիւզի թըղ-
թակցութիւնից Ս. Թէոդորեանի հետ,
որին նա վերաբերութեամբ կարդինալ
Պառնապոյի սպառնալիքներին ծաւալոցի
անունով դրում է. «Պառնապօն կհաչէ»
և թէ ինքն Հիւրմիւզը այնպէս է հաս-
կանում Մուրատի կտակի միտքը, ինչ-
պէս նա՝ հ. Ս. Թէոդորեանը, որոյ կար-
ծիքն այդ մասին արդէն ձեռ յայտնի է:

Դառնալով Սամուէլ Մուստեանի կը-
տակի իմաստին և բառին, ես կը դարձ-

նեմ ձեր ուշադրութիւնը, պարոններ,
 այդ կտակի վեցերորդ յօդուածի վերայ:
 Ոչինչ կասկած չէ կարող լինել նորա
 ընդհանուր համազգային նշանակութեան
 մասին: Առաջին բառիցը մինչև վերջինը
 նա միանգամայն ամբողջ Հայ ազգին է
 նուիրած: Չը կայ նորա մէջ ոչինչ բա-
 ցառութիւն, ոչինչ առանձնութիւն, ո-
 չինչ մասնաւորութիւն, ոչինչ որոշումն
 ազգիս այս կամ այն բաժնի հերձուա-
 ծողութեան օգտի, կը խնդրեմք ձեզնից,
 վերանորոգել ձեր յիշողութեան մէջ
 այդ կտակը: Ահա նոցա բառերը թող-
 մանամ Հայոց ազգի որը և աղքատ ման-
 կանց համար: «Հայոց ազգին որը և աղ-
 քատ մանկունք առաջեալ դպրատանն
 ձրիաբար ուսում ստանան և լիզուք ու-
 սանին և դառնան իւրեանց հայրենիքի:
 «Եւ եթէ ոմանք հարուստ անձինք ևս
 Հայոց ազգես» և այլն «Եւ որոյ վասն դը-
 րեթէ ըստ մեծի մասին անտեղունչ ազգս

Հայոց աղէտք են»։ «Հարուստ անձինք
աղղէս Հայոց»։ «Սփռեալ ի մէջ աղղիս» «և
անաւերօնջ աղղս զարթունցու ի քնոյ
թմրութեան և անհոգութեան»։ Ահա այս-
պէս են այն ընդհանուր բառերը և պար-
բերութիւնները, որ գործ է ածում կը-
տակողը իւր աղղի մասին, որին նա կը-
տակում է։

Մեզ կասեն թէ Ս. Մուրաար «Հայոց
աղղ» բառերով յատկացնում է իւր կը-
տակի մէջ Հայ Աթոլիկներին։ Չեմ
կարծում այդ բացառութիւնը լինի խե-
լացի մարդու կարծիք։ Նախ, այդ մեկ-
նութիւնը ոչինչ հիմունք չունի թէ ընդ-
հանրապէս, որովհետեւ միայն կաթոլիկ
Հայերը չեն կազմում Հայ աղղ, և թէ
մասնաւորապէս, որովհետեւ կտակը այդ-
պիսի բացառութիւն չունի իւր մէջ։
Արկրորդ՝ լօղիկայի կանոններով բացա-
ռութիւնը ընդհանուրից զուրս մի բան
է և նա յայտնվում է միայն այն ժամա-

նակ, երբ նորա վերայ առանձնապէս
խօսողը կամ զրոյը մասնանիչ է անում.
օրինակ՝ ես կտակում եմ այսպէս թող-
նում եմ հարստութիւնս իմ որդիքներին:
Աթէ ես կամենում եմ, որ իմ որդիք-
ներից մէկը կամ երկուսը չը ժառանգեն
այդ հարստութիւնը, ես պիտի անպատ-
ճառ ասեմ կտակիս մէջ՝ բացի իմ որ-
դի Ալրակոսին և Մարտիրոսին և մի-
այն այդ բացառութիւնը ցոյց տալով
եւ անկասկած կ'որոշեմ իմ ժառանգնե-
րի անձնաւորութիւնքը: Աւելին չըզնե-
լւի այդ անհրաժեշտ բացառութիւնը իմ
կտակի մէջ, ես ընդհանրացնում եմ իմ
կամքը և թողնում եմ ստացուածս բո-
լոր որդիներին: Այսպէս է լօղիկայի
կանոնը և դորան պիտի ենթարկուի Ա.
Մուրատի կտակը: Աորա ընդհանուր և
անխտիր Հայոց ազգի համար նշանա-
կութիւն ունենալը ընդունել է և ինքն
Մխիթարեան միաբանութիւնը: Կնչպէս

դուք յիշում էք Ս. Մուրատի կտակի պատմութիւնից: Սարգիս Թէոդորեանը իբրեւ միաբանութեան դործակալ և հաւատարմատար ներկայացաւ Մատրասի ատեանը իբրեւ ներկայացուցիչ Հայոց ազգի որբ և աղքատ երեխանց իրաւանց և այդպէս ատեանը նորան ճանաչելով և ընդունելով, որոշեց, որ Թէոդորեանը կարող է միջնորդել կտակի կատարմանը յօգուտ Հայոց ազգի: Աւստրիացւոյ կառավարութիւնը ճանաչելով Մխիթարեան միաբանութիւնը, իբրեւ մի խումբ, որ դործնականապէս իրագործում է ամբողջ Հայ ազգի իրաւունքը, պահանջեց նրանից հաշիւ հրիտակի գումարի մասին: Ֆրանսիական կառավարութիւնը նմանապէս տեսաւ, որ Ս. Մուրատի կտակը ընդհանուր Հայոց ազգին է վերաբերում, ասեց Ս. Թէոդորեանին հրովարտակ, որոյ մէջ գրուած էր յօդուած Թէ Մուրատեան վարժարանը փարիզում

կընդունէ Հայկազեան մանկունք: Միա-
բանութիւնը խնդրելով Ֆրանսիայից
թոյլատուութիւն բերել Մ. վարժարանը
Փարիզ, ձեակերպեց իւր նպատակը, ասե-
լով թէ նա հիմնում է այդ վարժարանը
Հայաստանի քաղաքական վերականգ-
ման համար:

Պէտք է այստեղ գնել մի երեւելի ի-
րողութիւն. Մ. վարժարանը Փարիզ վա-
խադրելու միջոցին Մխիթարեան միա-
բանութեան անդամք զիմեցին զէպի Փա-
րիզու աստուածաբանները և տեղական
եպիսկոպոսի խորհուրդը և ցոյց տալով
նոցա Ս. Մուրատի կտակը՝ խղրեցին
մեկնութիւն, թէ սլարտաւոր է արդեօք
Մխիթարեան միաբանութիւնը այդ կը-
տակի զօրութեամբ ընդունել Մուրա-
տեան վարժարանը և Հայ Լուսաւորչա-
կաններին: Թէ աստուածաբանը և թէ
եպիսկոպոսական խորհրդարանը տուե-
ցին միաբանութեան անդամներին գրա-

ւոր կարծիք, թէ Մխիթարեան միաբա-
նութիւնը միանգամայն պարտաւոր է,
Հայ Լուսաւորչականներին ճանաչելով
իրեն Մուրատեանի կտակի ժառանգ և
եթէ միաբանութիւնը չը թոյլադրէ Լու-
սաւորչականներին շահիլ այդ կտակի
գումարիցը, սոքա կարող են ստիպել Մը-
խիթարեաններին տալ նոցա կտակի մէջ
յիշուած իրաւունքները: Այդ դէպքը Ս.
Թէոդորեանը ուղղակի յիշում է իւր գըր-
ուածքների մէջ և յիշեալ խորհրդարանի
գրաւոր կարծիքը, եթէ չեմ սխալվում,
Արքեպիսկոպոս Այվազովսկին պահպա-
նում է իւր մօտ:

Ընդունելով Ս. Մուրատի կտակի այդ
ընդհանուր նշանակութիւնը բովանդակ
Հայ ազգի համար, Մխիթարեան միաբա-
նութիւնը ընդունում էր և Հայ Լուսաւոր-
չական երեխայք Մուրատեան վարժա-
րանը, որոց թիւը շատ էր, և այնքան

չատ էր, որ Հիւրմիւզը մինչև անգամ
նախատինք զրեց Սարգիս Թէոդորեանին
թէ Լուսաւորչականների թիւը այնտեղ
այնքան շատ է, որ «մերերին, կաթոլիկ-
ներին» վարժարանումը էլ տեղ չի մը-
նում:

Բովանդակ Հայոց ազգի իրաւունքը
հրիտակի գումարի և Մ. վարժարանի
վերայ Մխիթարեան միաբանութիւնը
այնքան անգամ խօսքով, զրով և գոր-
ծով ճանաչել է, որքան օր տեւել է Մու-
րատի կտակի և վարժարանի պատմու-
թիւնը:

Յանկալի է յիշել այդ խոստովանու-
թիւնը ամբողջապէս: Մտաւերեցէ՛ք նա-
խընթաց պատմութիւնը, իսկ ես կը յի-
շեմ, որ միաբանութիւնը ուղարկեց
պատգամաւորներ Հայաստանի ամեն
նահանգներ երեխաներ պատրաստելու
Փարիզու Մուրատեան վարժարանի հա-
մար և երեխանց թիւը առաւել շատ կը

լինէր իսկականից, եթէ ընդդիմութիւն
չը լինէր Վոսաւորչականների կողմանէ,
թէ նոցա որդիքը կաթոլիկների ձեռը
կրօնափոխ կարող են լինել: Հիւրմիւզը
կը գանգատէ, թէ Մատթէոս պատրիար-
քը Պօլսում նշուիք կարգաց նոցա վերայ,
որք իւրեանց երեխանցը կը տան Մխի-
թարեանների ձեռքը: Անթիւ են այն
գրաւոր բացատրութիւններն և խոստո-
ւանութիւնները, որոնք տալիս է մեզ
ինքն Մխիթարեան միաբանութիւնը իւր
գրագրութիւնների մէջ և որոց մի քանի-
սը ես յիշեցի ներկայ պատմութեան մէջ:
Չի կարելի մոռացման տալ և մի վիտտո:
Ոչ ոք այնպէս արդար վկայ չէ կարող
մեզ լինել Ս. Մուրաւի կամացը և նը-
պատակներին, ինչպէս նորա որդիքը, ո-
րոնք էին և նորա կտակակատարներն:
Ներկայ պատմութեան մէջ ես յիշեցի
այն նամակները, որ գրել էր Յովհաննէս
Մուրատեանն իւր մայր Աննային և Մը-

խիթարեան միաբանութեան, որոց մէջ
նա սմեհաճիշդ կերպիւ բացատրում է իւր
հանգուցեալ հօր Ս. Մուրաթի կամքը և
կտակի միտքը. հաստատելով թէ բովան-
դակ աղջն Հայոց է տէր այն ահագին
հարստութեան, որ՝ կտակել է նա վեցեր-
որդ յօղուածում: Ասում եմ նոյնը և այն
բանակցութեան մասին, որ ծաղկեց Ս.
Թէոդորեանի և Աբրայ Հիւրմիւզի մէջ
մի և նոյն խնդրի ճատին:

Ժողովեցէք, պարօններ, այդ ամենը
միասին, միացրէք նոցա կապելով մի
ընդհանուր ճշմարիտ լօղիկայի կապով և
դուք կը համոզուիք, որ Հայ Ղուսաւոր-
չականների իրաւունքը Ս. Մուրաթի կը-
տակի վերայ այնքան աներկբայեւի է,
որքան անկասկած է նոցա Հայ ազգային
ծագումն:

Եւնսական մի փառաւոր ասեմ ձեզ: Կան
երկու եղբարք՝ մէկը Ղուսաւորչական
Հայ է, իսկ միւսը Հայ կաթողիկէ է: Նո-

յա հայրը կտակում է թէ իւր կայքը
թողնում է իւր որդիքներին: Կաթողիկ
որդին օռաջինը ձեռքը պարզում է և
ստանում ժառանգութիւնը: Կարող էք
դուք Լուսաւորչական որդուն զրկել մի
և նոյն ժառանգութիւնից: Այս ուամիա-
կան օրինակ է Ս. Մարտարի կտակի
խնդիրը վերաբերութեամբ Հայ Լուսա-
ւորչականների պարզելու համար:

Գուցէ ասեն մեզ, թէ Ս. Մարտար
ինքն կաթողիկ էր, ուրեմն և նորա կր-
տակը ավտի լինի յօգուտ Հռովմէական-
ների: Ասածներիցս արդէն հետևում է
թէ որքան անճշդութիւն կայ այդ տրա-
մադրութեան մէջ: Ս. Մարտար հողին
տւանդելու ժամանակ յանկայաւ որ
նորա թաղման ծէսը կատարէ Լուսա-
ւորչական Հայ քահանայ և ոչ կաթողիկ,
երբ յայտնեցին ժառանգներին թէ չըկայ
այնտեղ Հայ Լուսաւորչական քահանայ,
նա կարգադրեց այսպէս. «Կաթողիկ քա-

հանայ չը մերձենայ նորա դիակին, այլ մի աշխարհական մարդ կարդայ նորա մարմնայ վերայ «Հայր մեր» և յետոյ դընեն նրան գերեզման: Եւ այդպէս կատարվեցաւ Ս. Մուրաթի թաղման ծէսը: Այս փոքրիկ փառքը ցոյց է տալի ձեզ թէ Ս. Մուրաթը ինչպիսի կաթողիկէ էր, ինչպէս էր հասկանում կաթողիկոսութիւն իրրե կրօն կամ իրրե ազգութիւն և որքան ճշմարիտ է այն կարծիքը, թէ նա իրրե կաթողիկէ, կաթողիկէին էլ կտակեց իւր կայքը: Յօգուտ կաթողիկէներին եղած փառտարանութեան անխորհուրդ և անիմաստ լինելը բաւական կարծեմ, բացատրուեցաւ վերոյիշեալ մեկնութիւնից թէ Ս. Մուրաթի կամքն ինչ էր:

Ինչ որ վերաբերվում է այն խօսքերին թէ Ս. Մուրաթը հեռեկեայ իւր աներ Աափայեղիանին, որ կտակեց յօգուտ կաթողիկէներին (?) ևս կարծում եմ, որ այդտեղ Մխիթարեան միաբանութիւնը

չարաչար մեղանշում է արդաթեան դէմ։ Այդպիսի հետեւողութիւն ոչ մի կետից չէ նշմարւում Ս. Մուրատի կտակի մէջ։ Բացի այդ Ռաֆայելեանի կտակն էլ մի վիճելի և մեծ խնդիր է Միաբանութեան համար։ Եթէ այսօր միաբանութիւնը վայելում է Ռաֆայելեանի կտակի բարութիւնները և Հայոց ազգը, որ անուանւած է այդ կտակի մէջ ժառանգ, զրկուած է այդ ժառանգութիւնից, այստեղից դեռ չի հետեւում որ միայն կաթողիկոսներն են տէր Ռաֆայելեանի կրտակին։ Այդ միայն ապացոյց է, որ Հայ Լուսաւորչականները շատ դանդաղ են շարժում իւրեանց իրաւունքները պաշտպանելում։ Ռաֆայելեանի կտակը Լուսաւորչականների համար միայն ժամանակի խնդիր է և ոչ թէ նիւթական իրաւանց անորոշութիւն։

Ուշադրութեան արժանի է մի այլ խնդիր, այն է՝ թէ ինչպէս սկսաք է նա-

յել Յովհաննէս և Նդուարդ Մուրատեան-
ների վարմունքի վերայ, որ նոքա իբրև
կտակակատարներ, հրաժարեցին իւրեանց
Սամուէլ Մուրատի կտակից յօդուտ Մը-
խիթարեան միաբանութեան, որ սա կա-
ռավարէ Մուրատեան վարժարանը, ինչ-
պէս կ'կամենայ և Նդուարդը մինչև ան-
գամ խնդրեց պապին, որ նա Փարիզից
վարժարանը տանէ Հռովմ, որ ուսում-
նարանը միանգաման ընկնի Հռովմէա-
կանութեան ձեռքը, կարո՞ղ է այդ հան-
գամանքը խոչընդոտ և արգելք լինել
Հայ Լուսաւորչականների իրաւանցը:
Բոլորովին ո՛չ, Յովհաննէս և Նդուարդ
Մուրատեանների հրաժարումն չէ հղել մի
հաստատ ընդ և նոքա, ինչպէս տե-
սաք պատմութիւնից միշտ ձգտել են
օգուտ քաղել իւրեանց կտակակատարա-
կան իրաւունքներից, որոյ զխաւոր ա-
պացոյցն է նոցա բողոքը Աւստրիացւոց
նախարարներին միաբանութեան դէմ,

սրանից հաշիւ պահանջելու նպատակով:

Եթէ ընդունենք, որ կառակաւատար-
ները միանգամայն հրաժարուեցան այն
իրաւունքներից, որ տրուած է նոյա Ս.
Մուրատի կտակով, դարձեալ ազգը, ինչ-
պէս ժառանգ, ոչինչ բան դորանով չի
կորցնում, որովհետեւ կառակաւատարը
միայն միջնորդ է մեռնողի կտակեալ
կամքը կատարելու մ. ուրեմն նա միայն
ճշմարտութեամբ պիտի այդ կամքը կա-
տարի և չունի իրաւունք ոչ մի զրկանք
պատճառելու ժառանգներին, որոնց օգ-
տի համար նա պիտի ծառայէր: Կառա-
կաւատարի խրաքանչիւր վարքը և զը-
նացքը, որ չէ համաձայն կտակի իմաս-
տին և բառին և որ զրկանք է պատճա-
ռում ժառանգներին, ոչինչ է համար-
վում: Այդպէս ոչ մի իրաւախոհութիւն,
որ կարող էր տեղի ունենալ միաբանու-
թեան և կառակաւատարների մէջ ազգի
իրաւանց վերաբերութեամբ, նշանակու-

Թիւն չունի, եթէ այդ իրաւախոհութիւնը փնասակար է ազգին, իբրեւ Ս. Մուրատի ժառանգին: Ուրեմն Յովհաննէսի և Աղուարդի փոփոխական հրաժարականները ոչինչ պէտք է համարել:

Բաւական եմ համարում այսքանս իբրեւ ապացոյց, թէ Հայ Լուսաւորչականներն ունին անժխտելի իրաւունք Ս. Մուրատի կտակի 6-դ յօդուածի դումարի վերայ՝ նորան ազգային լուսաւորութեան նպատակին ծառայեցնելու նկատմամբ:

Այսպիսի կերպիւ վճռելով առաջին հարցը դրականապէս և ակներև ապացուցանելով Մխիթարեանների ընդդիմութեանց միանգամայն ստույթիւնը, որ երբեք չի տայ նոցա իրաւունք օտարացնելու, կամ սեփականացնելու ազգային ժառանգութիւնը, մենք դրականապէս վճռած պիտի համարենք և

Երկրորդ խնդիրը, որ առաջինի կանոնաւոր հետեանք է, այն է թէ բնի արդեօք Հայ ազգը իրաւունք հաշիւ պահանջելու Մխիթարեան միաբանութիւնից ազգիս կտակած դումարի, կալուածների, սոցա արդիւնքների և վարժարանի նիւթական մատակարարութեան վերաբերութեամբ: Այդ հարցը իրականապէս արդէն վճռուած է, ինչպէս դուք տեսաք պատմութիւնից, քանիցս անգամ և ազգի հաշուետեսութեան իրաւունքը արդէն ճանաչուած է Աւստրիացւոց և Գաղղիացւոց տէրութեանց կողմից, նմանապէս և կտակակատար Յովհաննէս Մուրատեանի կողմից:

Ամենայն իրաւամբ աշխարհիս օրէնքներն ընդունում են և կատարելապէս որոշում են, որ կտակակատարները, (եթէ այդպիսի նշանակութիւն մենք տանք Մխիթարեան միաբանութեանը,) պարտաւոր են, պատասխանատու են ժա-

ռանգների առաջ թէ կտակի ճշմարիտ
կատարելու և թէ իւրեանց գործերի և
ծախքերի մասին կտակի կատարման հա-
մար: Գարձեալ կրկնում եմ, որ թէ մի-
աբանութիւնը և թէ նորա կանոնաւոր
գործակալները ազգիս հաշուապահանջու-
թեան իրաւունքը իւրեանց պարտա-
կանութիւն են համարել: Մտաբերեցէք
Մխիթարեան միաբանութեան պատաս-
խանը Աւստրիացւոց տէրութեան և մի-
աբանութեան թղթակցութիւնները իւ-
րեան անդամոց հետ, օրինակ Ս. Թէո-
դորեանի հետ հաշուատեսութեան մասին:

Եւ խկապէս եթէ դուք ընդունում էք,
որ Մխիթարեան միաբանութիւնը չէ
սեփականատէր Ս. Մուրադի հրիտակի
դումարին, թէ միաբանութիւնը ունի մի
կատարեալ կրաւորական դեր, կամ ունի
պարտաւորութիւն միայն Հայ ազգի, իբրեւ
ժառանգի, իրաւունքն ի կատար ածելու,
դուք արդէն ընդունում էք, որ ձեր

հաշուապահանջողութեան իրաւունքը անկասկածելի է:

3) Բայց այստեղ կարելի է մի միտք յայտնել, թէ գուցէ այդ իրաւունքները ժամանակի ընթացքում մենք կորուսած լինինք, որովհետեւ ամենայն իրաւունք ոչնչանում է, ջնջւում է, եթէ որոշեալ ժամանակամիջոցում նա չէ իրագործւում: Կարող են գտնուիլ մեր մէջ և այնպիսիները, որոնք կը զարմանան, թէ ինչպէս կարելի է այժմ հարց յայտնել մի կտակի մասին, որ գրուած է 1808 թուականին: Այդ զարմացողներին մենք միանգամայն կարող ենք հանդարտացնել հաւաստի առնելով, որ ս. Ս. Մուրատի կտակած գումարի վերայ մենք ոչ թէ չենք կորուսել մեր իրաւունքը, այլ մինչև անգամ կորուստի մասին այս դիպուածում խնդիր չի կարող ծագել, ժամանակի ընթացքը այստեղ ոչինչ դեր և ազդեցութիւն չունի,

հորա մասին խօսք անդամ չէ կարող լինել և բ. եթէ ժամանակի ընթացքը տեղիք ունենայ ալտեղ, մենք զարձեալ մեր իրաւունքը Ս. Մուրաթի կտակի վերայ չենք կորցրել: Նախ ժամանակամիջոցի կորուստի խնդիրն այս դիպուածում կարևորութիւն չը կայ յարուցանելու, որովհետեւ կտակի իրաւունքը անդործադրելի չի մնացել: Հայ կաթողիկէները օգուտ են քաղել այդ կտակի դրամից, ուրեմն ժառանգը և ժառանգութիւնը որոշուած և զործադրուած է և ղել, որովհետեւ Հայ կաթողիկէները Ս. Մուրաթի կտակով որոշուած ժառանգի, Հայ ազգի, մի մասն են: Ազգութիւնը — ամբողջութիւն է, չի կարելի հորան մասների բաժանել: Բայց այդ մի և նոյն կտակից օգտուել են և Հայ Նուսաւորչականք, ինչպէս տեսանք պատմութիւնից, մինչև Ֆրանս-Պրուսական պատերազմը, մինչև 1870 թուականը: Ինչպէս

կերեի հետեւեալից Ս. Մուրաթի կտակի
խնդիրները պիտի լուծուեն Անգղիացւոց
օրինաց և կարգերի ղորութեամբ: Իսկ
այդ օրէնքները կտակի խնդիրների և ի-
րաւանց լուծումն և ղործադրութիւնը
սահմանափակում են քառասուն տարուայ
ժամանակամիջոցում, այն ևս նոցա հա-
մար, որք բնակվում են Անգղիացւոց
պետութեան սահմաններում: Ուրեմն ե-
թէ մեր ազգի Ս. Մուրաթի կտակի վե-
րայ հիմնած ժառանգական իրաւունքնե-
րը ջնջվելու լինին մի որոշեալ ժամա-
նակամիջոցում, այդ միջոցը կօրցրած չէ:
Թէպէտ, կրկնում եմ, այս դիպուածում
ժառանգակամիջոցի խնդիր անկարելի է
յարուցանել:

4) Նայելով մեր ազգի այժմեան դը-
րութեանը, երբ առանձին ուշադրութիւն
է դարձրած ազգային կրթութեան և լու-
սաւորութեան վերայ այն աշխարհներում,
որտեղ Հայերը բարբարոս կառավարու-

Թեան և այլազգիներէի իշխանութեան
 ներքոյ մեծ տառապանքներ կրում են
 և որոց զէմ Հայոց մէջ լեռնաւորութիւն
 տարածելը միայն կարող է փրկարար
 զէնք հանդիսանալ, ի նկատի ունենալով
 և այն զլխաւոր հանդամանքը, որ Մխիթարեան
 միաբանութիւնը Ս. Մուրատի
 հրիտակը և կտակի խմատը անարդար և
 միանգամայն կտակողի կամաց հակա-
 ռակ է կատարել, միշտ հրաժարովի է նա
 ազգին և ժառանգներին հաշիւ տալուց,
 յայտնել է ձգտումն անօրէն ճանապարհ-
 ներով անհետացնել ժառանգութիւնը և
 այդ ձգտումը նա, ինչպէս երևում է, պա-
 հանջում է և այսօր, — ի նկատի ունե-
 նալով այս ամենը բնական է զնել այս-
 տեղ մի հարց ևս, թէ կարելի է արդեօք
 մերժել Մխիթարեան միաբանութեան ի-
 րաւունքը Ս. Մուրատի կտակի կատար-
 ման մէջ և գործադրել հրիտակի գումա-
 րը այնպէս՝ ինչպէս պահանջում են ազ-

գային լուսաւորութեան ներկայ պա-
հանջները և կարիքները: Հրաւիրում եմ,
պարտաւշք, ձեր կարևոր ուշադրութիւ-
նը այդ հարցի մեկնելու փաստերի վե-
րայ: Կտակակատարն է կտակողի կա-
մայ ճիշդ և օրինաւոր կատարողը: Կը-
տակակատարի իւրաքանչիւր գործունէ-
ութիւնը, որ հակառակ է կտակի և կը-
տակողի կամայքը և իմաստին, ոչինչ է
համարվում, բացի այդ անարդար կտա-
կակատարը պարտաւոր է անձամբ և
նիւթապէս պատասխանատու լինել ժա-
ռանգների առաջ, որոնց օգտին նա ուար-
տաւոր է կտակը կատարել: Ահա այն
ընդհանուր և համաշխարհային օրէնքը
և կանոնը, որ սահմանափակում է կը-
տակակատարի դերը և նորա գործունէ-
ութեան հետեանքը: Հետեանքներից մե-
կըն այն է, որ եթէ կտակակատարը ակ-
ներև և գիտակցաբար իշար գործ է դը-
նում նորան կտակով տուած իրաւունքը,

եթէ այդ չարագործութիւնը շարունակ-
վում է և կրկնվում, կտակակատարը պիտի
հեռացնուի իւր պաշտօնից որովհետեւ օ-
րէնքը, որ պաշտպան է ժառանգների
իրաւանց և կտակի որոշումներին, չէ
կարող սրբագործել ոչինչ անիրաւութիւն
և անարդարութիւն, ևս առաւել ի միաս-
ժառանգներին: Վերաբերելով այդ ընդ-
հանուր կանոնը Ս. Մուրաթի կտակի
կատարմանը Մխիթարեան միաբանու-
թեան ձեռով, մենք պիտի մտաբերենք
միաբանութեան գործունէութիւնը, որն
կատարեալ չարագործութիւն և անիրա-
ւութիւն է ձեռնում: Դուք յիշեցէք թէ
Ս. Թէոդորեանը որպիսի ընդգիմութիւն-
ներ յայտնեց, պատերազմեց միաբանու-
թեան դէմ այն անիրաւութեանց պատ-
ճառաւ, որ միաբանութիւնը գործ դը-
րեց և շարունակում էր այն մինչև ի
չափազանցութիւն: Դուք գիտէք օրի-
նակ, որ միաբանութիւնը Մուրաթեան

վարժարանը ծառայեցնում էր ոչ թէ որք
և աղքատ մանկանց կրթութեան համար,
այլ միաբանութեան անդամոց հարուստ
բարեկամների օգտին: Գիտէք նմանա-
պէս, որ Մուրատեան վարժարանը մեծ
պակասութեան և չքաւորութեան մէջ
գտնվում էր, այն ինչ հրիտակի գումա-
րի արդիւնքը թէոգորեանի խօսքով միլ-
լիօնների էր հասնում: Յայտնի է նմա-
նապէս, որ քանիցս անգամ միաբանու-
թիւնը փախել է հաշուետուութիւնից,
որ եղել են միաբանութեան կողմից ան-
տեղի և բոլորովին ապարդիւն ծախքեր,
որոնք Ս. Թէոգորեանը «գողութեան» է
նմանացնում: Յիշատակելի է և այն գըլ-
խաւոր փաստը, որ այսօր Հայ-Վուսա-
ւորչականներն արդէն ինն տարի է
մուտք չեն ունեցել Մուրատեան վար-
ժարանը, որ այդ վարժարանը իսկապէս
փակուած պիտի համարուի, որովհետև
նա միացրած է Ռափայելեան վարժարա-
նի հետ:

Բացի այդ ամենը չի կարելի մոռաց-
ման տալ և այն կաթոլիկ, առաւել
պարզ ասել, պրօպօզանդայի որոշման
կանոնը, որոյ զօրութեամբ իւրաքանչիւր
անձն, որ մտնում է կաթոլիկներէ վար-
ժարանները ուսումն ատենելու համար,
պարտաւոր է տալ մի խոստումն կամ
յայտնել մի համաձայնութիւն, որ ինքը
հագումով, մտքով և կամքով հնազանդելու
է այն վարդապետութեանը, որ կը մա-
տակարարեն կաթոլիկ վարժարաններու-
մը: Ուրեմն կաթոլիկութիւնը քաղաքա-
վարի կերպիւ իւր վարժարանների մէջ
կրթութիւն տալու գլխաւոր պայման
դնում է մի ուխտ ուսանողի կողմից,
որ է իսկապէս դաւանաւիժութիւն: Այդ
պատճառաւ կաթոլիկները ամենայար-
մար միջոց կաթոլիկութիւնը տարածե-
լու համար տեսնում են վարժարանների
մէջ, որտեղ նոքա քարոզում են, իբրեւ
սկզնական վարդապետութիւն, հալածու-

մըն այլ դառանութիւնների, որ կաթո-
լիկները կանուանին «հերձուածողու-
թիւն»։ Վերաբերութեամբ Մուրատեան
վարժարանի կաթողիկոսների այդ կանոնը
կատարեալ և ակներև դորձադրութիւն է
ունեցել, բայց բարեբաղդաբար առանց
հետեանքի։ Դուք մտաբերում էք այն
համակը, որ գրել էք Հիւրմիւզ Աբ-
բան Թէոդորեանին, թէ նա՝ Հիւրմիւզը
համաձայնեց Ղուսաւորչականներին, ո-
րոնց նա կանուանէ «հերձուածողներ»,
ընդունել Մուրատեան ուսումնարանը,
այն պայմանաւ և դիտամբ, որ նոցա
դարձնեն ուղղափառութեան (կաթոլի-
կութեան), բայց նա տեսնում է բոլորո-
վին հակառակը իւր դիտաւորութեան,
այդ պատճառաւ նա, Հիւրմիւզը, ար-
ձակել է Մուրատեան վարժարանից քա-
նի մի Ղուսաւորչականների երեխանցը
և մնացողների վերայ դարձնում է նո-
րա՝ Թէոդորեանի, ուշադրութիւնը, կա-

մենալով այդ բառերով հասկացնել թէ
այդ մնացողներին ևս քաղաքավարի առ-
թիւ հարկաւոր է լինտել ուսումնարա-
նից: Դուք մտաբերում էք և այն պա-
տասխանը, որ միաբանութեան անդամ
Ս. Թէոդորեանը գրեց Հիւրմիւղին: Եւ
ահա տեսէք, երբ Մուրատեան վարժա-
րանն ընկաւ Հիւրմիւղի կեղծաւոր շնոր-
հիւ և ստորհոգութեան պատճառաւ պա-
պի աղղեցութեան ներքոյ, յիշեալ կա-
թոլիկութեան կանոնը հասաւ այն ծայ-
րահեղութեան, որ Լուսաւորչականները
վնասուեցան Մուրատեան վարժարանից
և եթէ Մխիթարեան միաբանութիւնը
այսօր ձեր պահանջմանցը հետեւելով կա-
մենայ ընդունել ձեր աղքատ երեխային
Մուրատեան վարժարանը, նա վերոյի-
շեալ պայմանը առաջ կը բերէ և կը
գործադրէ իբրեւ դաւանափոխութեան
միջոցներ երեխայի վերայ: Ես հարցնում
եմ. կայ արդեօք Սամուէլ Մուրատեանի

Կա՛մ մի մէջ այնպիսի մի իրաւունք Մը-
խիթարեան միաբանութեան համար, որ
նա դորժ զնէ իբրեւ որոգայթ որսալու
խեղճ Հայ մանկտին պրօպօզանդային
ծառայեցնելու համար: Արեւի է արդեօք
նշմարել անգամ կտակի մէջ, որ Ս.
Մուրատեանը ցանկանալով զառնալ բա-
րերար իւր Հայ աղգի համար, կամենար
այդ բարերարութեան միջոցով Հռովմէ-
ացնել Հայ աղղը: Արեւի է արեօք կար-
ծել և հաստատել, որ հանգուցեալ կտա-
կողը այդ կերպիւ կամենար բարոյական
աղղասպանութիւն դործել: Երբ ինքը կա-
թոլիկ դուով, ի սրտէ ատում էր կաթո-
լիկութիւնը այն ատիճան, որ նա չը
կամեցաւ որ նորա թաղման ծէսը կա-
տարէր կաթոլիկ քահանայ, այլ հրամա-
յեց, որ եթէ հայ քահանայ չգտնուի, թող
նորա դադաղի վերայ «Հայր մեր» կար-
դայ մի աշխարհական մարդ և այնուհե-
տե իջեցնեն գերեզման նորա մարմինը:

Վերանորոգենք մեր յիշողութեան մէջ Ս.
Մուրատեանի կտակի վեցերորդ յօդուա-
ծը: Կտակը պատուիրում է, որ «պար-
տականութիւն չը լինի ասացեալ դրպ-
րատան ուսանողաց վերայ քահանայ լի-
նելոյ», որ «այնքան Հայոց ազգէն որք և
աղքատ մանկունք ասացեալ դպրատանն
ձրիարար ուսումն և լեզուք ուսանեն և
դառնան իւրեանց հայրենիքը»: Այդ բա-
ռերը, որ ցոյց են տալիս վարժարանի
ուղղութիւնը՝ ընդհակառակը տալիս է
միանշանակաբար ուսանողաց ազատութիւն
հետեւել իւրեանց բարոյական և մտաւո-
րական համոզմունքներին, առանց նո-
ցա վերայ բռնութիւն բանեցնելու, որ
ազատ և նպատակաւոր ուսումն ստանա-
լով նոքա կարող լինին մաքառել այն
տգիտութեան դէմ Հայաստանի մէջ, ո-
րոյ փարատելու համար կտակեց Ս. Մու-
րատեանը իւր հրիտակը: Այդ կտակի
վերոյիշեալ միտքն և նպատակը աղա-

ւազելը միաբանութեան կողմից, ես համարում եմ ամենազլխաւոր և դժուար միջոց հանել Մ. վարժարանի բոլոր իրաւունքները Մխիթարեանների ձեռքից:

Մինչև այստեղ ես ենթադրում էի, թէ Մխիթարեան միաբանութիւնն է Ս. Մուրատեանի կտակակատարը: Բայց իմ կարծիքով այդ միաբանութեանը ոչինչ իրողական, ոչինչ ներդրածական իրաւունք չէ տալի Մուրատեանի կտակը: Նորա դերն է, ինչպէս իրաւացի մեկնեց Յովհաննէս Մուրատեանը, կրաւորական. է խորհուրդի և միջնորդութեան կամաւոր պաշտօն վարժարանը հիմնելու համար: Իսկ նիւթական մատակարարութեան հոգսը կտակը դնում է կտակակատարների վերայ, Յովհաննէս Եղուարդ և Աննա Մուրատեանների վերայ: Անգամ մշտաւոր և բարոյական աջօք կոյր ընթերցողը այդպէս պիտի հասկանայ Ս. Մուրատի կտակի վեցերորդ յօդուածը:

Նախ՝ պէտք է ասել, որ անկարելի է տեսնել երկու ձև կտակակատարներ մի և նոյն կտակի մէջ, որք միմեանց հակառակ են: Այժմ Մուրատեանները անուանուած են այնտեղ կտակակատարներ, այս բառի ընդարձակ նշանակութիւնով, անհնարին է կարծել, որ նոցա հակառակ Մխիթարեան միաբանութիւնըն է նմանապէս կտակակատար մի և նոյն նշանակութիւնով: Այդպիսի անհետևողութիւն չը կայ ոչ կտակի բառի և ոչ նորա ընդհանուր իմաստի մէջ:

Այժմ Մազբաաու ատեանը յանձնեց Մխիթարեաններին հրիտակի գումարը միմիայն նորա համար, ինչպէս երևեցաւ ներկայ պատմութիւնից, որ այլապէս ազգը կարող էր զրկուիլ իւր ժառանգական իրաւունքներից և սրովհետև խկական կտակակատարները տասը տարիներ անցուցին և վարժարանին ազգին համար ոչ թէ չըհիմնեցին, այլ և հիմնելու

միտք չունէին: Դատարանը մեկնեց թէ
ատեանը պարտաւոր է պաշտպանել ժա-
ռանգների իրաւունքը և երկու չարիք-
ներից նա ընտրեց ամենափոքրը տալով
հրիտակի գումարը միաբանութեանը, ո-
րը իւրեան յայտնեց, ինչպէս Հայոց
ազգի իրաւանց ներկայացուցիչ և պատ-
րաստ իրազործելու այդ իրաւունքները:
Հասկանալի է, որ Մադրասու ատեանը
չէր ունենալ մտադրութիւն անդամ ան-
ուանելու միաբանութեանը կտակակա-
կատար, քանի սա այդպիսի անուն կամ
դեր չունէր կտակի զօրութեամբ: Աւեր-
ջապէս եթէ Մադրասու ատեանը տար
ևս այդպիսի անուանակոչութիւն Միտի-
թարեաններին, Հայոց ազգը դարձեալ,
իբրև ժառանգ, պարտաւոր չէ միաբա-
նութիւնը ճանաչել այդ յատկութեամբ
և չէ զրկուած իրաւունքից նորան բոլո-
րովին հեռացնելու կեղծ պաշտօնից,
քանի որ միաբանութեան չարազործու-

Թիւնները ազայուցած են: Միաբանու
թեան վէճը ազգի պարտապանների հետ,
որոնք էին Ս. Մուրատեանի որդիքը, չէ
ղլկում ազգին, ինչպէս ժառանգի, այլ
ձև տնօրինելու իւր իրաւանց կատարումը:
Ուրեմն Մադրասու ատեանի վճիռը ո-
չինչ իրաւունք չէ տուած Մխիթարեան-
ներին և չէ առնում ազգի բողոքի առա-
ջը միաբանութեան դէմ:

Եթէ Եղուարդ և Յովհաննէս Մուրա-
տեանները կամաւոր կերպիւ հրաժարե-
ցան իւրեանց կտակակատարական
դերից և բարձի թողի արին Մու-
րատեան վարժարանի խնդիրը, դա
միայն տալիս է Հայ ազգին ստիպո-
ղական միջոց անձամբ հոգալու վարժա-
րանի մասին և ոչ թէ այս հանգամանքը
ձգում է վարժարանը օտարի յափշտա-
կող ձեռքը, ինչպէս պատլի և այլն: Որ-
քան որ կամին կտակակատարները թող
հրաժարուին իւրեանց դերից, ընծայեն

և փչացնեն կտակի հարստութիւնը, ժառանգների իրաւունքը դորանից ոչ մի կողմից չլիարժեքէ կարող: Ժառանգն է աէր կտակի, կտակակատարն է ծառայ կտակի և ժառանգաց: Ուրեմն Մըխիթարեան միաբանութեան իշխանութիւնը անհետացնելը Ս. Մուրատեանի կտակի գործադրութեան վերայ ազգի կատարեալ իրաւունքն է:

5) Ս. Մուրատեանը կտակեց մի մեծ դումար Հայոց ազգի լուսաւորութեան համար: Ս. Մուրատը ոչ մի բաւով չէ ասել թէ վարժարանը որտեղ պիտի հիմնուի, միայն որոշած է, որ զեալներ առնուի Եւրոպայումը: Նշանակում է, որ վարժարանը պէտք է և կարենոր է հիմնել այնտեղ, ուր աւելի յարմարաւոր կը լինի ազգի մէջ լուսաւորութիւնը դիւրին կերպով տարածելու: Այսպիսի տեղ պիտի համարուին այն կեդրոններն, որոնք Հայոց ժողովրդին մերձաւոր տեղ

լինին, որոհեաւ վարժարանի հեռաւորութիւնը ժողովրդի բնակութեան տեղից վարժարանի յառաջադիմութեան գլխաւոր արգելքն է: Ինչպէս կարող է զորօրինակ, աղքատ Հայ երեխան Տաճկաստանի և Պարսկաստանի խորքերից զընազ փարիզ ուսումն առնելու: Եթէ փարիզ հասցնելու ծախքը լինի հրիտակի հաշուով, այն ժամանակը գումարը կը պակսի և այդ ծախքը չի լինիլ համապատասխան կտակի որոշման: Ուրեմն Ս. Մուրատի կամքն այն է, որ նորա վարժարանը հիմնուի այնպիսի մի կենդրոնում, որ նորա գոյութիւնը լինի նըպատակաւոր: Այդպիսի կենդրոնը, նայելով Հայոց այժմեան դրութեան, պէտք է համարել Կ. Պօլիս կամ Հայաստանի բաղմահայ քաղաքներից մէկը: Աս կարծում եմ այս որոշման դէմ ոչինչ հակառակ բան առաջ բերել չէ կարելի, բացի հռովմէական կամակորութիւնը:

6) Այդ կամակորութիւնը անշուշտ տեղիք կունենայ, երբ Հայ-լուսաւորչականները պահանջեն իւրեանց ժառանգական իրաւունքները Ս. Մարտեանի կտակի զօրութեամբ: Հանգուցեալ բարերարը հեռատեսութեամբ որոշեց և այգալիսի հակառակութեան մեկնելու միջոցը: Կտակի 6-րդ յօդուածը սահմանաւորում է, որ իւրաքանչիւր վէճ, որ ծագէ նորա կտակի առթիւ առհասարակ, պիտի քննուի ըստ օրինաց և կարգի տէրութեան Անգղիոյ: Ինձ աներկբայ և անսկիզբ է թվում, որ Լոնդրայի դատարանը և Անգղիացւոց օրէնքը միայն պիտի իշխանաւոր համարվին ստուգելու այժմ ամենայն բանակցութիւնք և անհամաձայնութիւնք, որ մեր դէմ կ'ընէ պրօսթօգանդան մեր համայն ազգային ներկայ ժառանգական իրաւանց պատճառաւ: Ամենայն վստահութեամբ կարելի է արդարաւիրական վճիռ սպասել այդ դատարանիցն:

7) Ուրեմն հարկաւոր է վերանորոգել ազգային ժառանգութեան խնդիրը: Պէտք է որոշել թէ ո՞վ պիտի միջազգային օրինաց մտօք համարուի Հայոց ազգի ազքատ և որը երեխանց իրաւանց ներկայացուցիչ և պաշտպան: Մեր պատմութիւնը և միջազգային տրակտատները նուիրել են Հայոց ազգին Աթոռիկոս ամենայն Հայոց, որոյ ընտրութիւնը հաստատուում է Ռուսաց Այսյսեր հաւանութեամբ և Սորա հպատակութիւնը ընդունելուց յետոյ: Այսպիսի կերպիւ հորա պարտաւորութիւններն և իրաւունքները որոշվում են Հայոց Հոգեւոր կոնսիստորիաների կանոնադրութիւնով (IX հատոր): Այդ օրինաց իմաստով կաթողիկոսին տուած է իրաւունք ազգային նախակրթութեան իրաւունք ծխական վարժարանների միջոցաւ և եկեղեցին իւր ծխական ուսումնարաններով ընդունուած է իբրեւ բարոյական անձն սե-

փականութիւն ձեռք բերելու, փարժա-
րանները պահպանելու և հիմնադրելու
համար: Բնական է ուրեմն, որ կաթու-
ղիկոսն իրաւատէր սխտի համարուի իւր-
եւ ազգային լուսաւորութեան հողատար
և ուրեմն իբրեւ ազգի կրթութեան իրա-
ւանց ներկայացուցիչ: Նշանակում է,
որ կաթուղիկոսը այդ մտօք ներկայա-
ցուցիչ է Ռուսաստանի և Պարսկաստա-
նի ազգաւ և որք Հայ մանկանց ժա-
ռանդական իրաւանց, որ Ս. Մարտտեա-
նի կտակով նոյա նուիրած է: Ի՞մ կար-
ծիքով Տաճկաստանի Հայերը և նոցա
ազգային հիմնադրութիւնները և գործող
անձինքը այլ ղիրք են բռնում իւրեանց
պետութեան մէջ: Նոքա են քաղաքա-
կան հիմնադրութիւններ, քաղաքական
իրաւանց տէր և ոչ թէ միայն մասնա-
ւոր կամ հասարակական: Նոյա գոր-
ծունէութեան պայմանները այլ են և ա-
ւելի ընդարձակ, քան թէ կաթուղիկո-

սինը. Ազգային ժողովն իւր նախագահով
(պատրիարքով) այլ բարոյական մարմին
է, քան թէ Սինօղը Էջմիածնայ իւր նա-
խագահով. Ես կարծում եմ, որ զոցա-
մէջ եղած դանադանութիւնը վերոյիշեալ
մասք այնքան յայտնի է, որ մանրա-
մասնաբար խօսելն իմ կողմանէ աւել-
ւորդ է:

Այդպիսի դանադանութիւնը պայմա-
նաւորմում է և վերոյիշեալ իրաւանց
ներկայացուցիչների տարբերութիւնը: Ես
կարծում եմ, որ սխալանք կը լինէր ե-
թէ Մուրատեան կտակի խնդիրը յարու-
ցանելու համար Տաճկաբնակ Հայք ճա-
նաչէին միայն Էջմիածնայ Սինօղի իրա-
ւունքը: Առաւել հետևողաբար կը լինէր,
որ Տաճկաբնակ Հայերը պաշտպանէին
իւրեանց իրաւունքներն այն միջոցներով
և անձանց կամ հիմնադրութեանց ձե-
ռամբ, ինչպէս որ նոքա միշտ և յաջո-
ղակ կերպով պաշտպանել են իւրեանց

ամբողջ Եւրոպայի առաջ մինչև ցայսօր։
Իմ կարծիքով Ռուսաբնակ և Պարսկաս-
տանի Հայերը կարող են որոնել Ս. Մու-
րատի կտակի իրազործութիւնը Էջմի-
ածնայ Սինօի նախագահի ձեռամբ, իսկ
Տաճկաբնակ Հայերը — Ազգային ժողովի
նախագահի ձեռամբ։

8) Եթէ այդ երկու նախագահքը իւ-
րեանց սրբազան ազգասիրական զգայ-
մունքներով կամենան այսօր (իմ կար-
ծիքով դա նոցա պարտաւորութիւնն է
անգամ) «կորզել» Մխիթարեաններին ձեռ-
քից յափշտակած ազգային ժառանգու-
թիւնը, պէտք էր միայն որոշել, թէ մինչ
ճանապարհով աւելի կանոնաւոր և նպա-
տակաւոր կը լինէր ազգիս համար այդ
«կորզելը»։

Կայ երկու ճանապարհ — դիպլոմատի-
կական և դատաստանական։

Եթէ այս դիպուածում գործ դնուի
դիպլոմատիկական ճանապարհը, կարելի

է գուշակել, որ Մուրաւեան վարժարանը կը հիմնուի այն երեխանց գերեզմանների վերայ, որոնց օգտին նա ծառայելու է: Հայաստանը, որ յայտնի է այժմ իբրեւ «Փոքր Ասիոյ մաս» անունով, այս օրերս և դեռ շատ տարիներ քաղաքական աշխարհի մէջ ձեռնալու է ինչպէս «քաւ գայթակղութեան»: Համարեան ամբողջ Նւրուպան նորա մէջ տեսնում է կենդրոն և միջոց մեզ համար անհասանելի բարձր զաղափարներ իրագործելու: Մենք տեսնում ենք միայն, որ Փոքր Ասիայի ծայրերը գտանվում են աներեւոյթ էակների ձեռքերում: Եր մեծ ուժով քաշում են նորան դէպի իւրեանց կողմը: Այստեղ Տաճկական պետական իրաւունքն է, այնտեղ Անգղիայի հոգաբարձութիւնն է իւր մեծամեծ շահերով և այլն և այլն: Հասկանալի է Հայոց մտաւոր և բարոյական վերականգնումն ուսման և

ուսումնարանների միջոցաւ անադին մեծութեան խնդիրներ և քաղաքական շահեր է առաջ բերում և դնում է մեծագոյն հարցական նշան ախոյեանների համար: Հայոց ազգի այդպիսի վերականգման խնդիրն է պետական շահերի խնդիր — շատ պարզ բան է: Ուրեմն կարելի է ասել, որ ազգային լուսաւորութեան խնդիրն այս ճանապարհի վերայ կանդնելով կ'ենթարկուի այն չափազանց և անվերջ դեգերմանց և պատերազմի, որոնց ենթարկվում են պետական շահերը: Բացի այդ գաղտնի բան չէ, որ նախարարութեանց մէջ սկսած բանակցութիւնների վերջը տեսնում ենք երբորդ և չորրորդ մարդկային սերունդք և ոչ թէ նոցա ժառանգակիցները: Անհնարին է այս դիպուածում յոյս դնել նորա վերայ, թէ Հայերն ունին այս ինչ մեծ մարդոց կամ մեծ ազգի համակրութիւնն, այդ բանը ամենից քաջ դիտեն Տաճկաբնակ

Հայերը իւրեանց վերջին օրուայ տեսածից:

Իմ անձնական համոզմունքը հակառակ է դիպլոմատիկական ճանապարհին, — բայց և այնպէս՝ թող աղգը ընտրէ այն միջոցն, որ հորան աւելի յաջողակ կերևի:

Բոլորովին այլ պատկեր ունի դատաստանական ճանապարհը: Մխիթարեաններն արգէն ապացուցեցին, թէ որքան յաջողակ է և պողարեր այդ միջոցը, թէ որքան հռչակաւոր պաշտպանութիւն դառաւ Հայոց աղգը Մադրասու ատեանում իւր իրաւունքը ստանալու համար Ս. Մուրաթի կտակով: Միևնայն օրէնքն և միևնոյն անգղիացւոյ դատարանը պիտի վճռէ մի և նոյն աղգի վիճն և իրաւունքը Մխիթարեանների հետ: Գարձեալ կասեմ, եթէ այդ տեղեկութիւնները, որ մենք ունինք Մուրատեան կտակի և վարժարանի մասին ճիշդ են, իմ

անձնական կարծիքն այն է, որ անհր-
նարին է, որ դատարանը չը ճանաչէ
աղգիս իրաւունքն այն մտօք, ինչպէս ևս
կարողացայ բացատրել հախընթաց կե-
տերում:

9) Ինչ որ վերաբերում է տեղեկու-
թիւններին, բնական է, որ հրանց պէտք
է ժողովել. եթէ օրինակ, Մխիթարեան
միաբանութիւնը լինի այնքան բարի և
ազնիւ, որ իւր գործերը և գրադրու-
թիւնները Ս. Մուրատեանի կտակի մա-
սին, չոչնչացնէ: Հակառակ դիպուա-
ծում Պօլսոյ, փարիզու, Մադրասու և
Աւստրիայի (հախկին) տեղեկութիւնները
հանդերձ այն տպագրութիւններով, որք
յայտնի են և հանդերձ կենդանի ակա-
նատեաների բարեխիղճ ցուցմամբ —
սոքա բաւական են վերականգնելու
Հայ աղգի որբ և աղքատ մանկանց
ժառանգական իրաւունքը Մուրատի
հրիտակի վերայ:

10) Այդպիսի մի մեծ և վսեմ գործի մէջ պիտի միանան ամենքն, որը Հայ անուն և ծագումն ունի, ի բաց դնելով դաւանութեան խտրութիւնը: Ես միանգամայն համոզուած եմ, որ մեր կաթողիկ—հայերը չարաչար սխալանաց մէջ են գտնուում և ահա քանի տարիներ է, որ տանջվում են նոքա, չեն կամենում հասկանալ, որ միանգամայն խաբուած են այն շահամուլ պղտոր խղճմտանաց տէր անձանց ձեռով, որք անխնայ կերպով ձգում են նոցա պապականութեան դժոխքը, որ ամենայն դժոխքներից ամենազրուելին է: Ստախոսութիւնը, որ անուանված է Հռովմէական վարդապետութիւն, անփորձների որսորդն է և այդ կերպիւ մեր խեղճ ազգը, վաճառվում է անսխալականութեան ստրկութեանը, որ թէ հողույ և թէ մարմնոյ համար մահաբեր է: Խաբուած են, կասեմ ես, մեր եղբայրները չհասկանալով, որ ստախոս

Հիւրմիւղները և սորան նման դարչելի
հողիք ոչինչ միտք չունին օգնելու այն
մոլորեալներին, որոնց նորա ձգում են
սլօտօգանդայի դեհենի մէջ, այլ միայն
փնտռում են այն սևագլուխները իւրեանց
անձնական շահերն և ծաւալոցի բանդերի
համար բնակիչներ են դռնում: Ազգ,
կրօն, խղճմտանք և այլն—այսոյիսի մարդ-
կութեան վսեմ գանձեր կատակ են նո-
ցա համար: Միթէ պատմութիւնը և
ներկայ Յւրոպայի կեանքը չէ ապացոյց
ասածներէս: Անհողի և անզգայուն դա-
դանը այնպէս անխղճօրէն չէ վնասում
միւսներին, ինչպէս պապականութիւնը
ջնջեց մարդկային բաղդը և բարիքը:
Նորա սարսափելի դործերը հայհոյանք-
ներ էին Աստուծոյ նախախնամութեան
դէմ: Թող հասկանան հայ կաթողիկոսները,
որ այստեղ չկայ կրօնի խնդիր, որ ա-
զատ է ամենայն քննութիւնից, այլ պա-
պականութիւնը ունի մարդկութեան հետ

անձնական հայիւ և ձգտել է միշտ դէպի մարդութեան կործանումը: Ազգ, ազգային լուսաւորութիւն և այլն — սոքա խաղալիք են արեղայի համար, և լաւ միջոցներ են աւաղակութեան, պոռնկութեան և այլն: Եւ այդ հասկանալով մարդկութիւնը վռնտեց պապականութիւնը իւր շրջանից ազատելով մարդուս նորա խղճմտանքը կաշկանդող Հռոմէականութեան շղթաներից: Խլեց նա արեղաների ձեռից և ուռմնարաններն և մարմնաւոր իշխանութիւնը: Թող մեր հայ կաթողիկ եղբայրները օրինակ վեր առնեն ֆրանսիացիներից և Պրուսացիներից: Թող նոքա մնան կաթողիկ, եթէ այդ նոցա դուր կգայ, բայց թող և մնան նոքա ազգութեամբ հայ և ոչ թէ կարգինալների հողաթափների տակ ճմլվող զեռունք:

Ուրեմն թող հայ կաթողիկները, որոնք նոյնպէս զրկուած են Մուրատեանի հրի-

տակից, ինչպէս և Ղուսաւորչականները,
միանան զիտաւորութիամբ և ազգասի-
րական հոգւով և ստանան իւրեանց ի-
րաւունքները, ապահովեն նոցա, որ ցեղը
չուտէ և գողը չգողանայ: Այդպիսի կեր-
պով, այդպիսի խմբովին ազգային պա-
հանջը, կզնէ Մխիթարեան միաբանու-
թեան այն ղրութեան մէջ, որոյ բնական
հետեանքն կլինի ազգային լուսաւորու-
թեան տան հաստատուն շինութիւնը:

Ահա այն տասն խնդիրները, որոնք
ծաղում են Մուրատեանի կտակի և
վարժարանի պատմութիւններից:

Այսքանս թող բաւական համարվի
վերջ դնելու մեր այս օրուայ զրոյցին և
եթէ իմ այսքան թերութիւններով առատ
խօսակցութիւնը համոզեց ձեզ իրաւացի
համարել, որ Հայոց ազգի որբ և աղքատ
մանկտին զրկված է օտարի ձեռով, եթէ

այդ խօսակցութիւնը առիթ կտայ ձեզ
մտածելու յիշեալ խլած իրաւունքները
վաստակելու, եթէ վերջապէս, ինչ որ
ինձ անկասկած կըթվի, դուք համախոս
էք ինձ հետ, թէ մեր ազգի բաղտաւո-
ւութիւնը և փրկութիւնը ամենայն չա-
րիքներից պէտք է տեսնել ազգային
լուսաւորութեան մեջ—եւ ինձ նպատա-
կիս հասած կհամարեմ: Եթէ մեծահան-
ճար Զբանսիացի հեղինակն, որ աշխար-
հիս մէջ կատարեց այն՝ ինչ որ հնարա-
ւոր էր հողածնի համար, հողին աւան-
դելու բոպէում խնդրեց «լոյս, լոյս և
լոյս», մենք հայերս, որ նոր ենք յարու-
թիւն առնում մեր կիսամեռ դրութիւնից,
պարաւոր ենք հետեւել նորան և դան-
կանալ միայն, «լուսաւորութիւն, լու-
սաւորութիւն և լուսաւորութիւն»: Բա-
րոյապէս լոյսն և լուսաւորութիւնը կը
ցրուեն այն թանձր մառախուղը, որ
ուրիշները մեքենայօրէն ձգել են մեր

հայրենիքի հորիզոնի վերայ, նոքա ակ-
ներե են և են այն երկու սրբազան մեծ
սիւններն, որոնց վերայ հիմնված է մեր
ազգային հաստատութիւնը և շինու-
թիւնը, այն է եկեղեցին, կրօնը և ազ-
գային լուսաւորութիւնը: Մենք հասկա-
ցել ենք և աւելի ևս կհասկանանք, որ
մեր պարտաւորութիւնն է միացնելով
մեր բազուկները ուժով բռնենք և պաշտ-
պանենք այդ ազգային հաստատութեանց
սիւնները, և չմոռանանք երբէք, որ եթէ
սոցանից մէկը խախտի, մենք առաջինը
կլինենք, որ կճմլվինք փլատակների տա-
կը: — Ազգային լուսաւորութիւնը կը
պարզէ այն ուղիղ ճանապարհը, որ
տարեկ է ուրիշ ազգութիւններին դէպի
յառաջադիմութիւն և հասցրել է նոցա
ազգութեանց կատարելութեան: Եւ այդ-
պիսի կերպիւ մարդկութեան պատմու-
թիւնը (կգայ այն օրը), որ մատնանիչ անե-
լու է զանազան ազգաց շահաւէտ գործերը,
ցոյց կտայ և մի սքանչելի գործ, որ
կանուանի Հայոց ազգի լուսաւորութեան,
անկախութեան և մեծութեան գործ:

Վ. Ե. Ր. Զ:

2r




Վ Ր Ի Պ Ա Կ Ք



Երես	Տող	Պակաս	Սխալ	Ուղիղ
20	10	փիլիսոփայից		
21	6	որ		
21	25	ինչ		
22	1		վեր	ի վեր
23	4	.		...
23	15		կեղանուծեան	կենդանուծեան
29	24		Աստուծոյն	Աստուծոյն





2739 - 2799

ՀՀ Ազգային գրադարան



NL0029274

ՀՀ Ազգային գրադարան



NL0029273

ՀՀ Ազգային գրադարան



NL0029272

ՀՀ Ազգային գրադարան



NL0029271

ՀՀ Ազգային գրադարան



NL0029275

ՀՀ Ազգային գրադարան



NL0029270

